



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



241

---

6-20



ՔՐԻՍՏՈՆԷՍԿՍՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

---

ԳԻՐՔ Բ.

Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

THE UNIVERSITY OF CHICAGO

PHILIP W. BARON

Faint text block, possibly a title or subtitle, including the word "PROFESSOR".

Second faint text block, likely a list of names or a table of contents.

Third faint text block, possibly a list of names or a table of contents.

Final faint text block at the bottom of the page.

ՆԵՐՔԻՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԻՆԱԻՈՐ ՀՈԳԻՒՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՏԵՍՈՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒՎ. ՃԱՄՊԱԶԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1855



சென்னை நகராட்சி ஆணைப்படி

சென்னை நகராட்சி

சென்னை நகராட்சி ஆணைப்படி

சென்னை நகராட்சி

சென்னை நகராட்சி ஆணைப்படி





## ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Երբոր հոգի մը իր մարմինէն ծանրութիւն մը  
ու աշխրբէս զգուանք մը խմանալով կը բաղձայ  
անգամ մը աս բեռերէն թէթեւալ, ալ բո-  
լոր խելքը միտքը վեր երկինքը կու տայ իր վեր-  
ջինքներուն՝ դժոխքին՝ արքայութեան ու յաւի-  
տենականութեան մտածմունքներովը . ու ահա  
ասանկ մարդը ինչ որ կըսէ, ինչ որ կընէ, կրնայ  
ըսուիլ՝ որ աշխարհասէր մարդուն համար նորե-  
լիք ու սովորականէն դուրս բաներ կը սեպուին :  
Վասն զի անոր սրտին մէջը խօսողը չէ թէ բնա-  
կանը, հապա գերբնական մարդն է, չէ թէ մար-  
մինն է՝ որ կը խօսի, հապա ներքին հոգին, անի-  
կայ է որ կը զգայ, կը շարժի կը գործէ . ուստի  
մտածմունքներն ալ բարձր, խորին, ազնուա-

կան, խորհրդածուծիւններ մը հասուն, փորձ,  
ճշմարիտ, հարազատ. իմաստներ սուր, բանուկ,  
եռացկուն խօսուածներ, փափուկներքին զգա-  
լի, թէ և կամացուկ համառօտ, բայց հոգելից,  
շարժիչ ու մխիթարական միանգամայն. վասն  
զի շնորհքն է՝ որ անոր միտքը սրելով սիրաբ դըր-  
դելով, անանկ լեցուն գեղեցիկ իմաստներ յղա-  
նալ կու տայ իրեն ներսը: Աստուած ինքն է՝ որ  
անոր բերնովը իր յաւիտենական վճիռները կը  
խօսի, կամ իրեն ձեռքը անոր սրտին վրայ դրած՝  
սրտէ՛ի սիրտ կը խօսի: Անոր համար ասանկ մար-  
դուն սրտին համար կրնայ ըսուիլ օրինաց տախ-  
տակ մը, Աստուածաշունչ գիրք ու Աստուծոյ  
գաղտնի խորհուրդներուն ներքին սրբութիւն  
սրբոց մը, ուր անդ Աստուած կը խօսի, մարդը  
կը լսէ, մարդը կը խօսի ու Աստուած կը լսէ: Ա-  
սանկ սիրտ մը կը նմանի հանասպազորդական զո-  
հի սեղանին, ուսկից քաւչարար ու գոհացողա-  
կան ողջակէզներուն անգաղար անուշ հոտերը  
կելլան կը թռչին: Բայց պահ պահ աստուած-  
սիրութեան բոցը առնելուն, սպանդին ներքին  
մասունքներուն բուրմունքները կելլան Աստու-  
ծոյ աթոռը, հոն լռութեան միայնութեան մէջ  
՛ի խորոց սրտէն կը լսուի ներքին մարդուն հա-  
ռաչանքները խօսուածները՝ Աստուծոյ ու իր  
անձին հետ, որ ինչպէս տաքուկ բոցեր մը բեր-

նէն դուրս կելլան կը սլանան, ու մէյմէկ վառ-  
վառն նետերու պէս սիրտը ճղքած վիրաւորած,  
կելլան կը թռչին երկինքը: Ահա այսպիսի հոգիի  
մը խօսուածներ են իմին խորհրդածութիւններս  
ալ, որոնք ես հոս տեղս գրի առեր անցուցեր  
եմ՝ աս սղտիկ աշխատութեանս մէջ՝ որ Ներքին  
խօսակցութիւն Մինաւոր Հոգիին կը կանչեմ. ու  
բովհետև ինչպէս թէ եռանդուն, առաքինի,  
աշխրբէս առանձնացած հոգիի մը կուրծքին զար-  
կուածներուն անկաճս տուած, կամ թէ ասկէ  
աւելի՝ անոր սիրտը ներսը ինչած ու հոն տեղ ան  
ծածուկ ներքին խօսակցութիւններուն մտիկ ը-  
րած՝ կը գրեմ: Ամէն մէկ խորհրդածութեան  
նիւթերուն մէյմէկ առանձնական հոգիի կարճա-  
ռօս խօսքեր սուրբ գրքէն առած ժողված, ի-  
մին խօսելու նիւթիս բնաբան դնելով, որոնց վը-  
րայ իմին աս առաջագրած տասուերկու խոր-  
հրդածութիւններս կրնեմ, երևան ընելով ա-  
նոր մէջը ան պահուած ծածկուած ան սուրբ  
խմասաները ու ներքին հոգիները, ուսկից շար-  
ժած սիրտը գիտցեր է խօսիլ: Անոր համար հո-  
գեսեր ընթերցողին պէտք է հանդարտօրէն ու  
բանուկ մտքով մը գրուած խօսքերուն խորուն-  
կը թափանցել, ու չէ թէ սանկ երեսանց մը կար-  
դալ անցնիլ, որուն քիչ է ստուղը, որչափ միտ-  
քը քննութեանով անոնց մէջ հանդարտօրէն կը

զբազի կը դադրի , նոյնչափ ալ եռացկուն հոգի  
ներներսը կը զարթնուն , սիրաը հոգևոր ու երկ-  
նային անուշուծիւններու համուես կըլլայ , կը  
զմայլի , կը մխիթարուի , կը նորոգուի ու ինքն  
ալ եռանգուն հոգիին պէս կը սկսի իր սրտին մէջ  
եփել եռալ լեցուիլ ու առատանալ :





# ՆԵՐՔԻՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

## ՄԻՆԱԻՈՐ ՀՈԳԻՒՆ

### ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

#### ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ա.

« Դու ո՞վ ես մարդ » .

ՀՌՈՎՄ. Թ. 20 :

Ընջի անդամ որ ես ինձի քաշուած կը մտնտամ, մէկէն իմին ինչութեանս մը տաճմունքը մտքիս մէջ կարթննայ՝ թէ ես ի՞նչ եմ, ո՞վ եմ. « Դու ո՞վ ես » : Ասանկ հարցում մը մէկ ուրիշ հարցմունք մըն ալ մէջ տեղ կը բերէ՝ թէ քիչ մը առաջ ես ի՞նչ էի ու ի՞նչ եմ հիմա . տասը, քսան, երեսուն, յիսուն, կամ թէ հարիւր տարի առաջ ես ի՞նչ էի . ահա ի՞նչ ըլլալս ամենեին չեմ դիտեր, չեմ յիշեր, որովհե-

ան չէի ինչ մը, ոչինչ մըն էի. կամ թէ  
 շատ ըսեմ, առ մը հող փոշի: Արք բոլոր  
 աշխարհքը իր ամէն դարդերով, գեղեց-  
 կութենով ու կատարելութենովը ինտոր  
 որ հիմա. ամէն բանը հիմակու պէս իր  
 տեղն էր, միայն ես չկայի. չկար ոչ հո-  
 դիս ոչ մարմինս, չէր լսուած անունս յի-  
 շատակս. Աստուծմէ ՚ի դատ մէկու մը  
 միտքը չէի ընկած. մէկը չէր սիրած դիս  
 անկէ դուրս, ինչպէս որ ես ալ չէի մտա-  
 ծեր, չէի սիրեր դուրիշ մը: Աս ունեցած  
 ճիրքերուս ամէնը, որոնցմով հիմա դար-  
 դարուած եմ, բանականութիւնը, յիշո-  
 ղութիւնը, միտքը, կամքը, մարմինը, ըզ-  
 դայարանքները, ամենեին մէկը չունէի,  
 վասն զի մարդ չէի, չունէի վրաս մարդ-  
 կութենէն մաս մը. բայց հիմակու հիմա  
 ոչինչ ըլլալէն դարձայ եղայ ինչ մը բան  
 մը, յանկարծ վրաս եկան ասոնց ամէնը,  
 դտայ դիս մարդոց կարգը անցած, ու ա-  
 նոնցմէ մէկը եղած, ես ալ անոնց պէս  
 սկսայ մտածել, խօսիլ, դղալ, շարժիլ.  
 Ինչ էի ու ո՞վ եղայ, մանաւանդ որ ինչ  
 մը չէի ու ինչ մը եղայ: Ահա այսչափ մենձ  
 մենձ դարմանալիքներ եղան ոչնչի մը վը-  
 րայ: Ա՞լ արդեօք բրաւ ասոնց ամէնը. ի-  
 րաւընէ ուրիշ մը չէ, բայց եթէ ամենա-  
 կարող, ամենաբարի ամենազէտ Աս-  
 տուած մը՝ որ այսպիսի դարմանալիքներ

դործեց ոչնչի մը վրայ : Բայց կը հարցը  
 նեմ ես ինձի . « Դու ո՞վ ես մարդ » ինչ  
 բան ես դուն . ասանկ հարցմունք մը մէկ  
 շատ մտմտալու նիւթեր ու պատճառներ  
 կու տան ինձի : « Դու ո՞վ ես մարդ » . ես  
 հողիէ ու մարմինէ բաղադրուած էակ մըն  
 եմ , մէկ միութիւն կապակցութիւն մը՝ որ  
 շատ ներհակութիւններ իր մէջը ունի . վա-  
 սըն զի թէ որ հողիիս կողմանէ մտածե-  
 լու ըլլամ , ահա կը գտնամ զիս բանա-  
 կան , անմահ ու յաւիտենական ըլլալ մը .  
 միտք մը՝ որ մտածելուն մէջը Ստուծմէ  
 ՚ի դատ սահման մը չունի , կամք մը՝ որ ա-  
 դատ ու անձնիշխան է բնելուն չընելուն  
 մէջը , սիրտ մը՝ որ Ստուծմէ դուրս ու-  
 բիշ բան մը չկրնար լեցընել . ի՞նչ գերա-  
 դանցութիւններ : Բայց թէ որ մարմինիս  
 վրայ մտածեմ , ահա մէկ ապականելի ,  
 եղծանելի հողէ կաւէ շաղամ մահկանա-  
 ցու ստեղծուած մը . զգայութիւններ՝ որ  
 միշտ երկրաւոր ու մեղանչական բանե-  
 րուն հետ են . անդամներ՝ որ միշտ բար-  
 ւոյն հակառակ զինս շարք բնելու ետեմն  
 են . կիրքեր՝ որ անսանձ ծովուն ալիքնե-  
 րուն նման մէկզմէկ ճնշելով , իրենց յա-  
 մառ ու կատաղի վրէժխնդրութեան զոհ  
 կրնեն զիս : Ստոնց ամենուն վրայ մար-  
 մին մը վատուծ , ցաւած ; տկար , դան-  
 դաղ , ախառաւոր ու մահկանացու , որ է

ըսել հող փողի . ի՛նչ ցածութիւններ : Ահա մարդ ըսածնիս , որուն մէկն ալ ես եմ , բանաւոր ու անբան ստեղծուածներուն մէջ ըլլալ մը . ինտոր որ հողիէ մարմինէ բաղադրած , ատանկ ալ երկու զիմազէմ բնութիւնները մէկ տեղ իր վրան առած միացուցած . որչափ մէկուն ձեռքովը երջանիկ , նոյնչափ միւսով ապերջանիկ :

Աւստի քանի որ ասիկայ ասանկ է , ըսէ ինծի հիմա . « Դու ո՞վ ես մարդ » . ի՛նչ էիր ստեղծուելէդ առաջ , ի՛նչ ես ստեղծուելուդ մէջը , ու ի՛նչ պիտոր ըլլաս մեռնելէդ ետե . մէյմէկ մտածելու նիւթեր անձիս ճանաչման մէջ՝ որ իմին ով ըլլալս կիմացընեն ու ճշմարիտ ինքնաճանաչութեան կատարեալ ուսմունքին բանալիք կըլլան . վասն զի առանց ասոր թէպէտ փիլիսոփայ ըլլամ , տգէտ եմ . երբոր կը կարծեմ որ ամէն բանը զիտեմ , բան մը չեմ զիտեր , որովհետեւ չեմ զիտեր սրբոց զիտութիւնը՝ որ ինքը զինքը ճանչնալուն վրայ կը կենայ : Ի՛նչ օգուտ է ինծի ստեղծուածներուն բնութիւնը քննել իմանալ , թէ որ ես զիս չեմ իմացեր նէ . ի՛նչ շահ կը բերէ ինծի իզմէ դուրս եղած բաներուն պատճառը ուժը քննել հասկընալ , քանի որ ես զիս չեմ ճանչնար , ներսի զիս պատահած բաներուն փորձ չեմ ըլլար , ու



բովհեան աշխարհի կառավարութեան բե-  
 ուր չունիմ, բայց իմ ներքիս կառավա-  
 րութիւնը ինծի կիյնայ, իզմէ կը պա-  
 հանջուի անոր ամէն շարժմունքը դիտել  
 ու կանոնաւորել: «Դու ո՞վ ես մարդ»: Ի՞նչ  
 բան կրնայ հպարտացընել զքեզ, ար-  
 դեօք սկիզբդ, բայց ահա ոչընչէն դատ  
 ի՞նչ ունիս, արդեօք կեանքդ, բայց ահա  
 անիկայ մէկ շատ տկարութիւններու խեղ-  
 ճութիւններու շարունակութիւն չէ՞ մի, ար-  
 դեօք մահդ, բայց ահա անիկայ մէկ աղէ-  
 տալի հարկաւորութիւն մըն է՝ որ մար-  
 մինդ ափ մը մոխիր կը դարձցընէ ու հո-  
 դիդ երկու ստոյգ՝ բայց անորոչ յախտե-  
 նականութեան անցնելուն կէտին մէջ կը  
 դնէ, առանց սպահովելու քեզի մէկը  
 կամ միւսը:

Հասլա աստնցմէ որո՞ն վրայ կրնամ ի-  
 մին հպարտութեանս բարձր շէնքը շինել.  
 վասն զի թէ որ աստնք աղէկ մը քններ  
 մտածեր էի, ի՞նչպէս կրնայի անանկ մենձ  
 համարմունք ունենալ, մենձ մենձ դադա-  
 փարներ ընել վրաս: Բայց ահա իմին հը-  
 պարտութիւնս, անձնասիրութիւնս աս  
 կերպ մտածմունքներէն փախչելովը, ան-  
 ձիս ճանաչմունքը կը ծածկէ իզմէ. չիթո-  
 դուր որ իմանամ իմին ինչ ըլլալս, որպէս  
 զի չըլլայ որ խոնարհիմ, ատեմ զիս, ի-  
 մանալով ասանկ խեղճ տկար ըլլալս ու

ամէն բանին մէջ Աստուծոյ կախումն ունենալս . ուստի որչափ հարկաւոր է ինձի մէկ երկու ասանկ հարցմունքներ ընել եւ ինձի . որովհետեւ ասոր մտածութեան պէս չկայ կարուկ դեղ մը իմին հպարտութեանս :

ԲԱՂԵԼԻՔ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ահա այսպիսի ճշմարիտ խորհրդածութիւնները իմ ինչութեանս վրայով շատ մը ազդեցութիւններ միտքս կը ձգեն :

Նախ առաջ հաւատքս կը շարժեն , ցուցընելով ինձի ան ամենակարող ստեղծող Աստուծոյ՝ որ իր յաւիտենականութեան մէջ մտածեր սիրեր է զիս ու ժամանակով ստեղծեր է իր երեսին պատկերը . ուստի ասանկ Աստուծոյ մը ինչպէս պէտք է ինձի բոլոր յոյսս ապաւինութիւնս դնել , որ ինտոր որ ստեղծեց նէ , նոյնպէս ալ պիտոր պահէ . ինչպէս ամէն դժուարութիւններուս կարօտութիւններուս մէջ անոր դառնալ զիմել , իր ձեռքը յանձնել զիս , մենձ յուսով ու ապահովութենով մը իր աստուածային նախախնամութեանը , սիրոյն ու բարութեանը վրայով :

Երկրորդ կը շարժեն սէրս , իմացընելով որ երբոր եւ զԱստուծ չէի կրնար մտածել սիրել , ինքը առաջուրնէ մտմտաց

սիրեց զիս ու որպիսի սիրով . ուստի այս պիսի բարի ողորմած Աստուած մը ընտոր պէտք է ինծի սիրել , պատուել , փառաւորել , ու սիրել ամենէն աւելի , պատուել ամէն գորութեամբս , փառաւորել բոլոր կեանքիս մէջ . ինչպէս պէտք է զիս բոլոր ըլլալովս մէկտեղ անոր ծառայութեանը տալ , ամէն գործքերուս վախճանը նստատակը անոր փառքին շտկել , անոր համար ապրիլ մեռնիլ :

Երրորդ կը շարժեն խոնարհութիւնս , իմացընելով որ ես ինծմէ բան մը չունիմ , ամէնը Աստուծմէ եկած են , երկնքին պարզներն են ինծի . անոր համար ինչպէս պէտք է ինծի խոնարհիլ Աստուծոյ առջին , միշտ խոստովանելով իմին ոչնչութիւնս , չպարծենալ ձիրքերուս վրայ , ամէն բանին մէջ անկէ կախում ունենալս ճանչնալ , չապաւինիլ անձիս ուժին իմաստութեանը , նուաստ համարմունքներ մը ունենալ վրաս , ամէն գովեստը պատիւը Աստուծոյ տալ , ինչպէս միայն անոր վայելէ , ու յանձս առնել ամէն կերպ նախատինքը անարգանքը , ինչպէս մի միայն ինծի արժանի , վասն զի ո՞վ եմ ես ու ո՞վ է Աստուած :

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Բ .

« Թե սրպէս հասից 'ի մեռելոցն յարարիւն » .

ՓԻԼԻՊ . Գ . 12 :

Թէպէտև հիմա Աստուծոյ ձեռքին ա-  
սանկ մէկ պատուելի ստեղծուածն եմ ,  
կերպ կերպ ձիրքերով ու պարզեներով  
զարդարուած , բայց թէ քիչ մը ետքը ինչ  
պիտոր ըլլամ , ուր պիտի երթամ , չեմ գի-  
տեր : Ահա աս մտածմունքը բոլոր կեանքս  
լեղի ու տրամալի կընեն ինծի ու մէկ շատ  
հոգերու ու վախի դողի մէջ կը ձգեն . վա-  
սըն գի քիչ մը ետքը , թէպէտ օրը ժամը  
ատենը յայտնի չըլլայ ինծի , նոյն հողին  
պիտի դառնամ երթամ , ուսկից որ սկիզ-  
բը եղեր էի . ան փառաւոր շէնքը՝ որ հի-  
մա գլխէն ինչուան ոտքը զարդարուած է ,  
պիտի շիջանի իջնայ , հողին հաւասարի ,  
գեղեցկութիւնը շնորհքը ծաղկի նման թա-  
ռամի թափուի ու աս տաքուկ կենդանի  
փափուկ մարմինը ցուրտ , անշարժ , ան-  
պիտան կտճղ մը դառնալով , իր ամէն  
զարդարանքէն կապտած կողոպտած գըլ-  
տորի իյնայ ան մութ փոսին մէջ , ուսկից  
ալ ելլալիք չունի , հոն իր բաղդը կանկ

կառնէ , լոյսը կը մարի , մութը խաւարը  
կը պատեն զանիկայ , անունին հետ ինքն  
ալ անյայտ կըլլայ կերթայ : Ինչպէս ահա  
զին նաւ մը ծովին մէջտեղը առազատու  
ներով դրօշակներով դարդարուած ու ծան  
րադին հարստութենով բեռնաւորուած ,  
որ խէլ մը ժամանակ հոս հոն քաղքէ քա  
ղաք կը պտըտի , անցնելուն դառնալուն  
ծովեզերքները կը հնչեցընէ . բայց թէ յան  
կարծ քարի մը զարնելով խորտակի , շուտ  
մը կիջնայ կընկղմի ծովուն անդունդը ու  
ամէն գեղեցկութիւնը , փառքը , դանձը իր  
հետը կառնէ կինջեցընէ , մենձ ցաւ տես  
նողներուն : Ափսոս ասանկ գեղեցիկ  
ստեղծուածի մը , ընտոր որ մարդս է : Ա  
սոնց ամէնը ըլլալու բաներ էին . բայց վե  
րին վճիռը հրամանն է , պէտք է որ քալէ  
տեղը երթայ . ինչպէս որ ուրիշներուն վը  
րայ կատարուեցաւ , ու ամէն օր կը կա  
տարուի , անանկ ալ իմ վրաս պիտոր կա  
տարուի : Ահա ամէն տեսածս լսածս մէյ  
մէկ աղղեցութիւններ են՝ որ աս բօթ լու  
րը ասկից անկից ժողված , շուտ շուտ կը  
բերեն կը հասցընեն ինձի . ասիկայ արդէն  
հրատարակուած վճիռ մըն է , որ տղիտու  
թիւն չտանիր , ուզես չուզես կը լսեցընէ ,  
այսօր վաղը , աս տարի զալ տարի , երբոր  
է նէ՝ մեռնելու է , քաղաքներուն մէջ նոր  
նոր մարդիկներ , տներուն մէջ նոր ընտա

նիքներ կու գան ու հինը կերթայ գերեզմաններուն մէջը դոցուելու, նոյն իսկ աշխարհիս մէջը նոր աշխարհք մը կը տեսնուի. ծնաւին ետեէն միշտ մեռաւ մըն ալ հետը կու գայ: Ա կըրջապէս ինչ ընեմ, ո՛ր կըրթամ, աս բռնաւորին ձեռքէն խալսելու ճար չկայ, որովհետեւ ամէն քաղքին քովը գերեզմանատուն մը կը գտնամ, մեռելոց մենծկակ քաղաք մը ձեռացած. ախտո՛ս, ասոր համար է ուրեմն որ մարմինս առանկ փափուկ կը պահէի, գիշերը ցորեկին խառնած գանձեր ժողվելու ետեէն էի, մենծ մենծ դործքերու ձեռք կը գարնէի անունս հանելու մտքով. ինչ անխելքութիւն:

Բայց ահա քեզի հոս տեղը հին ցաւիս վրայ ուրիշ նոր ցաւ մըն ալ. վասն զի ասանկ ստոյգ բանի մը մէջ, ինչպէս որ մահն է, զեռ մէկ շատ անստոյգ բաներ ունիմ առջիս տարակուսելու ու մտմտալու. « Թէ որպէս հասից ՚ի մեռելոցն յարութիւն »: Արովհետեւ չեմ գիտեր որ երբ պիտոր մեռնիմ, շուտ թէ ուշ, մատղաշ արենքիս, կտրիճ հասակին, թէ տարիքս առնելուն, ո՛ր պիտի մեռնիմ, ներսը դուրսը, ցամաքը, ծովուն վրայ, ո՛ր տեղ, ո՛ր ծակը մահը պիտոր գտնայ զիս. ընտո՛ր պիտի մեռնիմ, առաջուրնէ ճանչցուած մահով, թէ յանկարծակի մը դալով, ջեր-

մով խոցով, ծովին մէջ թէ ցամաքի վրայ  
 փորձանքի մը հանդիպելով. ահա ասոնց  
 մէ մէկը իմ զիտնալու բաներս չեն, ու  
 չզիտնալս աւելի լեղի կընէ ինծի մահին  
 յիշատակը: Բայց հոս միայն չլիննար  
 մտմտութիւնս, առ քեզի ուրիշ մտածելու  
 նիւթ մըն ալ, մէկ տարակոյս մը՝ որուն  
 մէջէն հնար չէ ելլալ. « Թէ որպէս հասից  
 'ի մեռելոցն յարութիւն »: Վասն զի չեմ  
 զիտեր որ արդեօք արդար հողի մը, չէ  
 նէ մեղաւորի մահով պիտոր մեռնիմ. շը-  
 նորհաց մէջ, բարի մահուան պատրաս-  
 տութենով, չէ նէ մեղաց մէջ գէշ մա-  
 հուամբ, յանպատրաստից, աս երկուքէն  
 որք բաժին պիտոր խնայ ինծի, մտմտա-  
 լու նիւթ. վասն զի որչափ արդարին մա-  
 հը անուշ է ու բաղձալ կու տայ ինծի ա-  
 նոր, նոյնչափ մեղաւորինը դառն է ու  
 զարհուրելի կընէ դանիկայ: Բայց ահա  
 ըստ այսմ մահիս եղանակին անստոյգ ըլ-  
 լալովս, վախճանիս ալ անստուգութիւնը  
 մտքիս մէջ կը ծագի, թէ արդեօք փրկուիմ  
 չէ նէ դատապարտուիմ պիտոր. երջա-  
 նիկ չէ նէ ապերջանիկ յաւիտենականու-  
 թեան պիտոր հանդպիմ. արքայութեան  
 չէ նէ դժոխքին բաժին պիտի ըլլամ. աս  
 երկու ներհակ ճակատագիրներուն որք  
 ճամբուս առաջը կտրէ պիտոր դպչի ին-  
 ծի: Ու ահա ասոնց ամէնը որչափ մը-

տածեմ, նոյնչափ մտածելու նիւթեր կը գտնամ, ու անդիտութիւնս կիմանամ, ինչու որ չեմ գիտեր՝ թէ սիրոյ չէ նէ ատելութեան արժանի եմ, շնորհաց չէ նէ մեղաց վիճակին մէջն եմ, Աստուծոյ բարեկամ չէ նէ թշնամի եմ:

Երկու կողմանէ ալ ինչպէս որ բաւական սպառճառներ ունիմ արտմելու ու ուրախանալու, երկրայելու ու ապահով ըլլալու, անանկ ալ միշտ կը պարտաւորիմ երկու ծայրերէն փախչիլ՝ յանդգնութենով մը ես գիտառաջ նետելով, կամ յուսահատութեան մը մէջ բռնուած, կորսուելով. հապա միշտ սուրբ երկիւղի, ու քրիստոնէական յուսով անձիս փրկութեանը փոյթ տանիլ. յուսալ ու երբէք չյուսահատիլ, բայց միշտ անապաւինութեամբ անձին ու առ Աստուած ապաւինութեամբ միայն պէտք է որ յոյսը ու վախը փոփոխակի մէկմէկու օգնեն ու բարեխառնեն զիրար:

### ԲԱՂԵԼԻՔ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԵՆԵՐ

Ահա ասանկ դողդղալու խորհրդածութիւնները խէլ մը ազգամուքներ կընեն ներսի գիտ:

Նախ առաջ կիմացընեն որ ինչ աչքով նայելու եմ մարմինիս վրայ, ինչպէս թէ



խմինս չէ, այսօր կայ վաղը չկայ. անոր համար պէտք է որ իր ուղածները չընեն, կամքը չկատարեն, որովհետև ետքը բան մը չխոստանար ինծի. մէկ փախստական դերիի պէս գործածեմ գանիկայ, ես չմեռած մահացընեմ անոր ամէն մեղանչական բաղձանքները. մէկ օտարականի պէս ապրիմ աշխարբիս վրայ, միշտ երկիրքին յոյսս գնելով անոր հառաչեմ բաղձամ, ինչպէս բուն ճշմարիտ հայրենիքս, ճամբուն վերջին նպատակը:

Երկրորդ կիմացընեն ինծի ամէն իժիր մահուան պատրաստ կենալ. քանի որ ասանկ չեմ գիտեր անոր ատենը տեղը, կեանքիս ամէն օր վերջինը սեպելով, ամէն գործքս ալ կեանքիս ետքի գործքի պէս ընելով. ու ինչպէս որ ամէն օր կըրնամ մեռնիլ, անանկ ալ բոլոր կեանքս մահուան շարունակ պատրաստութիւն մը ըլլայ: Աս նկատմունքով ուր որ երթամ, ինչ որ ընեմ, մահին մտմտութքը հետս պարտացընեմ. ամէն գործքիս սկիզբը ու վերջը ըսեմ ես ինծի՝ որ պիտի մեռնիմ:

Երրորդ հոգոյ փրկութիւնս անստոյգ վիճակի մէջ ըլլալովը, կիմացընէ ինծի միշտ խոնարհութեան ու վախի մէջ ըլլալ. խոնարհութեան՝ որովհետև որուն որ հիմակ կը հպարտանամ, պահեկէ մը ետքը ձեռքէս պիտոր երթայ. վախի՝ որով-

հետև չեմ գիտեր որ ինչ վիճակին մէջը պիտոր տեսնամ դանիկայ, երջանիկ թէ ապերջանիկ. ուստի աս մտքով յօժար սրտանց ընդունիմ խաչը նեղութիւնը մահացուցմունքը, միայն որ հոգիս ապահով վիճակի մը մէջ դնեմ, ու միանգամայն ես ինծմէ յոյսս կտրած, բոլոր ապաւինութիւնս Աստուծոյ դնեմ, անոր անհուն ոգորութեանը կսթընիմ, շնորհք լոյս օգնութիւն խնդրեմ անկէ, որ այսպիսի դժուար, ու երկիւղալի գործքին մէջ բարի կատարածի մը հանդիպիմ, հոգիս փրկեմ:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Գ.

«Չի՛նչ օգուտ է մարդոյ՝ երէ գաշխարհս շահեսցի և զանձն իւր կորուսցէ» .

ՂՈՒԿ . Թ . 25 :

Թէպէտ և աշխրբիս մէջը ամէն ուղածս ըրած ալ ըլլայի, բանի մը աչքս ետես չմնար, մենձ գործքեր տեսնէի, երևելի պաշտօններ բռնել, դատառներ աշխարհքներ հնազանդեցընել, քաղաքներ աւրել շինել, դանձեր վաստկիլ, ամէն տեղ անունս գրցունել տալ, մենձէն պղտիկէն մատով ցուցուիլ, ահա ասոնց ամէնը, ու

ալ ասոնց պէս մէկ շատ պայծառ աչքի  
 փալփալուն բաներ ինչ շահ, ինչ օգուտ կը  
 բերեն ինծի, թէ որ հոգիս կորսնցընեմ.  
 հոգիս՝ որ իմին ըլլալու մէջը ամենէն գե-  
 րագանց մասն է, որ բոլոր աշխարհք մը  
 որչափ գեղեցիկ կատարեալ, նիւթական  
 ու ժամանակաւոր ըլլալովը չեն կրնար  
 երբէք հաւասարիլ անոր. հոգիս՝ որուն  
 համար Աստուած մարմնով խաչուեր մե-  
 ռեր է, Յիսուսի Քրիստոսի մը թափած  
 արիւնը անոր փրկանքին զին եղեր է. հո-  
 գիս՝ որուն փրկութենէ յաւիտենական եր-  
 ջանկութիւն կախուած է, ինչպէս որ կո-  
 րուստէն ալ յաւիտենական զժոխք մը.  
 մէկ խօսք՝ հոգիս որ մէկ հատիկ է ինծի ու  
 ուրիշ չունիմ, անոր համար ալ կորուստը  
 անդարմանելի ու անդառնալի է: Թէ որ  
 ասանկ հոգի մը կորսնցընեմ, ինչ օգուտ  
 է ինծի աշխարհքներ քալել երթալ, թա-  
 դաւորներ նստեցընել վերցընել, ծովը ցա-  
 մաքը իրար խառնել. միթէ ես ասոնց հա-  
 մար ստեղծուեցայ, ասոնք են մի բանս  
 գործքս աշխարհիս վրայ. բնառ ամենեին,  
 ասոնք ինծի վերաբերութիւն մը չունին:  
 Վասն զի իմին մէկ հատիկ գործքս հոգիս  
 փրկել է որուն բոլոր շահը օգուտը իմինս  
 է. պէտք չէ որ դիտացուն, ունևոր, մենծ,  
 երևելի մարդ ըլլամ, աս կամ ան աստի-  
 ճանին հասնիմ, սա նա պատուաւոր պաշ-

տօնը բռնեմ, հարստութիւն փառաւորութիւն մը ձեռքս ձգեմ, բայց պէտք է որ հոգիս փրկեմ. վասն զի թէ որ ես ինծի օգտակար չեմ նէ, հասլա որին օգտակար պիտոր ըլլամ, թէ որ ես ինծի փոյթ չընեմ, որին կիցնայ հոգ ընել ինծի համար: Ահա ինչուան հիմա աս նպատակէն դուրս ըրած գործքերս, ամէնը ժամաւաճառութիւն ու ոչինչ մը համրուելու են. բայց հոգի փրկութեանս համար դատածներուս ամէնը, հարիւրապատիկ պաղաքեր պիտոր ըլլան ինծի յախտենական կեանքին մէջ:

Հասլա քանի որ ասիկայ ասանկ է, տարակոյս մը չկայ, ուստի ես ալ հիմակուր նէ աս մէկ հատիկ ամենահարկաւոր խրատին մտիկ ընելով որուն վրայ յախտենականութիւն մը կը վերաբերուի, «Չինչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհս շահեսցի և զանձն իւր կորուսցէ», ամէն հոգս մտամտութեամբ անոր կու տամ, ամէն նպատակս դիտմունքս հոն կը դարձցընեմ, բոլոր առուտուրս անոր վրան կը պտըտցընեմ, որպէս զի փրկեմ զանիկայ. աս որոշմունքը մտքիս մէջ անանկ հաստատուն բան մըն է, որ կարելի չէ ինծի աս մտքէս փոխուիլ, կամ թուլնալ, ու ես դառնալ: Իրաւ է որ զանիկայ փրկելը ըստ ինքեան դժուար բան մըն է, շատ աչ-

խատանքի արունքրտինքի պիտոր արժէ , սուղ պիտոր նստի ինծի , գիտեմ որ ետեւէս առջևէս մարմին մը , աշխարհք ու սատանայ մահուչափ երզմնցած թշնամիներ ունիմ . ճամբաս նեղ է , վտանգները շատ , փորձութիւնները սաստիկ . փշերու ժայռերու վրայ պիտոր քալեմ , ծովերէն անդունդներէն պիտոր անցնիմ . ասոնց ամէնը գիտեմ , մէյմէկ աչքիս դիմացը շարած է , բայց գէն չունի , հոգ չէ , ամէն դժուարները կը դիւրիննան ինծի , ամէն լեղիները անուշի կը փոխուին , անկարելի կարծուածները կարելի կըլլան . բաղձանքը եռացքը՝ որ ներսի դիւ կը զգամ , ամենուն կը բաւէ կը յաղթէ , վասն զի սրբտանց կուզեմ հոգիս փրկել : Միթէ աշխարքի մարդիկ ասկէ քիչ աշխատանքներ ունին դիմացնին՝ փուճ , անցաւոր պատիւի , մենծութեան համար . ինչ մենծ ամօթքրիստոնէի մը յաւիտենական կեանքին հաւտացողի մը՝ աշխարքիս համար եղածը Աստուծոյ համար չընել . միթէ դժոխքին կրակէն խալսելու համար մենձ բան մը կը համրուի քիչ մը ժամանակ նեղ խիստ կեանքի մը տալ զինքը , միթէ արքայութեան փառքին հասնելու համար շաբան է մի կտոր մը դժուարութիւններուն դիմանալ : Իրօս նեղ մութ խուցի մը մէջ միս մինաւորիկ գոցուիլ մնալ , ողջ ողջ

մեռածներուն պէս գերեզմանի մէջ մըտնալ, անոնցմէ տարբերութիւնը չունենալով ամենուն ոտքին տակը ըլլալ, աշխարհիս խնտումներուն վայելմունքներուն տհաճութիւն զգուանք մը իմանալով՝ կենդանի մարմինին մէջ ամէն հեշտութիւններուն մեռած սիրտ մը ներսը տանիլ, դժուար բաներ են. բայց քանի որ միջոց մը կըլլան հոգիիս փրկութիւնը ապահով վիճակ մը դնելու, աշխարհ բան մը չեն երևնար, բոլորով սրտով կը յարուիմ կը վարուիմ անոնց :

Իրաւցընէ խելացի մարդու ու ճշմարիտ հաւատացեալի մտածմունք, որ իր հոգիին յարգը քիչէն շատէն ճանչցեր է, դժուարին ինչ ըլլալը գիտէ, արքայութեան ինչ տեղ ըլլալուն կտոր մը համը սուեր է, անոր համար ձեռքն ալ բոլորովին աշխարհէս քաշեր է, ու ինչպէս թէ օտարութեան մէջ նոր պանդխտութիւն մըն ալ կը վարէ :

ՔԱՂԱՅԼԻՔ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ահա առանկ քրիստոնէական խորհրդաճոթիւնները խել մը որոշմունքներ կարթընցընեն մտքիս մէջ :

Նախ և առաջ կը սորվեցընեն որ աշխարհքիս մէջը բուն մէկ հատիկ դասեկու

գործքս հոգիս փրկելն է, մնացած ամէնը  
ունայնութիւն է. ուստի ինչպէս պէտք է  
ինձի անոր համար աշխատիլ, ամէն վաս-  
տակիս մէջ ան մենձ առուտուրս առաջ  
տանիլ, անոր մէջ յաջողուելու համար՝  
աշխատանքէ մը չփախչիլ, քրտինք մը  
չխնայել, ան անգին մարդարիտը գնելու  
ձեռք անցընելու համար՝ ամէն ունեցածս  
յօժարութեամբ հանել տալ :

Երկրորդ կիմացընեն ինձի որ աշխար-  
քիս ամէն վայելքը, խնտումը, մենծու-  
թիւնը ոչինչ է, անցաւոր ըլլալովը՝ ա-  
նոնցմէ մէկը չկրնար երջանիկ ընել զիս,  
որ միայն հոգւոյ փրկութենէս կախուած  
է. ուստի ընտոր պէտք է ինձի ատել ար-  
համարհել զանոնք, յիշելով որ մեռնելու  
ժամանակը ինձի ուրախ ընող բաները՝  
չէ թէ ըրած խնտումներս՝ ժողված զան-  
ձերս պիտոր ըլլան, հապա հոգիս փրկե-  
լու մտքով ըրած հոգերս, դատած գործ-  
քերս, թափած քրտինքներս :

Երրորդ առջիս կը գնեն քրիստոնէական  
մահացուցմունք մը, ես զիս ուրանալով,  
ամէնը ոտքիս տակը առած, Քրիստոսին  
ետեէն երթալով փրկութեան նեղ ճամբա-  
ները. ուստի որպիսի հոգևոր եռացքով  
պէտք է ինձի սրտիս մէջը եփիլ եռալ՝  
Աստուծոյ աղէկ ծառայութիւն ընելու,  
պատուիրանապահութեանց մէջը ճիշդ :

առաքինութեանց մէջը ջանացկոտ ու ուրիշ ամէն քրիստոնէական պարտաւորութիւններու մէջը ինչուան վերջը մտազիր ու հաւատարիմ ըլլալու :

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Դ .

« Երկայնամիտ լեր առ իս, և նստուցից քեզ » :

ԽՅՏ . ԺԸ . 29 :

Կը խոստովանիմ, ով տէր իմ, որ շատ կողմէն պարտաւորութիւններ ունիմ . քեզի այսքան անթիւ անհամար անիրաւութիւններու գրկանքներու՝ որ քեզի ըրի ու կընեմ . բայց ահա այսօրուան օրս կատարեալ ապաշխարութենով մը կողեմ անոնց ամենուն ճիշտ հատուցմունք մը ընել . քու աստուածային արգարութեանդ , աս մեղաւոր սրտիս զղջումը լիան ողջակէզ մը ընելով քեզի , ուրկից բան մը չաւերնայ , ամէնը քու պատուոյդ էրի հատնի : « Երկայնամիտ լեր առ իս, և հատուցից քեզ » . կը հատուցանեմ, աս է՛ կապաշխարեմ, բայց անկեղծ, սրտանց, ներքին ապաշխարութենով մը , արցունքը աչքէս չվազցուցած սիրտս անոր լեզիութեանը ծով մը կընեմ , վճարմունքիս դս



Հին բոցերը չերեցուցած՝ սպանդին մա-  
 սուներներուն ներքին բուրմունքները կը  
 հանեն, ապաշխարութեան խստութիւնը  
 դրսի գգայարաններուս վրայ չբանեցու-  
 ցած՝ սիրտը, կամքը, միտքը կը մահացը-  
 նեն մեղքին: Ասապաշխարեն, բայց ամ-  
 բողջ կատարեալ ապաշխարութենով մը,  
 առանց մէկը դուրս հանելու պահելու կի-  
 սելու, ամենուն վրայ տարածելով իմին  
 զղջումս ցաւս, ամէն տեսակին վրայ իջ-  
 նալով, ամէն հասակին խրաքանչիւր մեղ-  
 քերը ներս առնելով: Ասապաշխարեն, բայց  
 այսօր, հիմա, առանց վայրկեան մը ու-  
 չացրնելու, ետ ձգելու, դանդաղելու, հի-  
 մակընէ հաստատ որոշմունքով առաջա-  
 դրութենով մը՝ մէյմըն ալ չգործելու դա-  
 նոնք, աւելի յանձն առնելով բիւր ան-  
 դամ մեռնիլը, քան թէ անոնցմէ մէկը  
 նորէն գործել: Ասապաշխարեն, բայց բո-  
 լոր կեանքիս մէջ, ներքե դնելով դիս ա-  
 պաշխարութեան կրթանքին ամէն տեսակ  
 խստութիւններուն, տունս ինծի վանք մը  
 ճղնարան մը ընելով, խուցս մահացուց-  
 մունքի սպանդանոց մը, անկողինս գե-  
 րեզման, հացս մոխիր, ու ըմպելիքս ար-  
 ցունք: Ահա ասանկ ապաշխարանք մը  
 կուզեմ ընել. քանի որ աչքս չեմ գոցեր,  
 կուզեմ հաշիւներս աղէկ մը սրբել, ան-  
 դիւ աշխարհին բան մը չձգել. քանի որ

կէս ճամբան եմ, դատաւորիդ զխմացը չե-  
լայ, դահիճին ձեռքը չմատնեցայ, կա-  
պուած ձեռքս ոտքս մութ բանտը չնետ-  
ւեցայ: « Երկայնամիտ լեր առ իս, և հա-  
տուցից քեզ »: Երկայնամտութենով սպա-  
սէ, համբերէ քիչ մը ժամանակ ալ, օր ա-  
տենն տուր. ինծի յանձնէ քիչ ժամանակ  
մը դատաւորութեանդ պաշտօնը, տես ինչ-  
պէս ես ինծի ամենևին չխնայելով՝ դա-  
տաւոր ու դահիճ մը ըլլալով անձիս վրայ,  
պիտոր հատուցանեմ քեզի ան ամէն դրը-  
կանքներուս անիրաւութիւններուս՝ որ շատ  
կողմէն ունիմ քեզի: Հատուցանեմ պի-  
տի, այսինքն վճարեմ, մէկ ճիշդ արդար  
վճարումով մը. խմին ընելիք հատուցմուն-  
քըս, որչափ որ կարելի է նէ, հաւասար  
պիտոր ըլլայ Աստուծոյ մենծութեանը վե-  
հափառութեանը՝ որ անարդուեցաւ, մեզ-  
քին ծանրութեանը մենծութեանը՝ որոնց-  
մով զրկուեցաւ, ընելու վճարմունքս պի-  
տոր ըլլայ արդարութեան պատարագ մը,  
մեզքին հետ չափելով պատիժին խստու-  
թիւնը, վասն զի պիտի վճարեմ առատ ար-  
ցունքով, յարատե աղօթքով, առատա-  
ձեռն ողորմութենով, խիստ ծումապահու-  
թենով: Պիտոր վճարեմ, բայց մեզքին  
տեղութեանը չափ հաւասարեցրնելով  
հատուցմունքս. ինտոր որ ամէն մէկ յան-  
ցանքը իրեն սահմանուած պատիժը ունի,

ատանկ ալ խմին հատուցմունքս կեանքիս մէջը ըրած մեղքերուս տեսութեանը հետ չափելով պիտոր վճարեմ, մնացած կեանքիս օրերը ապաշխարութեան խստութիւններուն մէջը անցընելով. ինչպէս որ կեանքս ինչուան հիմա գրեթէ մեղքերու շարունակութիւն մը եղաւ, անանկ ալ ասկից ետքը մնացածը ապաշխարութեան յարատեութիւն մը պիտոր ըլլայ: Պիտի վճարեմ, բայց մեղքին տեսակին ու որպիսութեանը յարմար վճարումով մը, ատելութիւնը՝ սիրով, բամբասանքը՝ ջատագովութենով, ունայնասիրութիւնը՝ ճշմունքով, անատակութիւնը՝ համեստութենով, պատուասիրութիւնը՝ ամբարտաւանութիւնը՝ խոնարհութենով ինքնաճանաչութենով:

Ահա աս եղանակ վճարմունքով պիտոր հատուցանեմ գրկեալ Աստուծոյս. «Երկայնամիտ լեր առ իս, և հատուցից քեզ»: Բայց թէ ինչուան հիմա քեզի ըրած հատուցմունքներս ասանկ եղան, հոս պապանձումն կառնէ զիս, խօսքը բերանս կը հատնի, ինչ ըսելիքս կը կորսնցընեմ. որովհետեւ զիտեմ որ այսպիսի թոյլ, կիսկատար, պակասաւոր հատուցմունքս բաւական չըլլալով սրղողած Աստուծոյ բարկութիւնը ինչեցընելու, վշտացեալ դատաւորիս սիրտը առնելու, գոհ ընելու աս-

տուածային արդարութիւնը . կը վախճամ որ չըլլայ թէ նորէն բողոք մը քալէ վրաս , մենձ դատ մը բացուի գլուխս , ու չկրնամ առջը առնել , ու պէտք կըլլայ անդառնալի վերջին վճիռով մը ձեռքով ոտքով կապուած՝ դժոխքին յախտենական քանարը նետուելու , հոն ծանր շղթաներուն տակը փտտիմ՝ ու ինչուան վերջին դանկը հատուցանեմ , մէկ երկան , լեղի , ցաւալի , բայց անօգուտ անպտուղ ապաշխարութենով մը՝ յուսահատութենէս կատաղութենէս աղաներս կրճտելով , որ ինչպէս կեանքիս մէջ ապաշխարութեան ժամանակը , առիթը , անանկ անմտութենով անհոգութենով ձեռքէս փախցուցի , ու առնին մէջը դիւրին ու վաստակով ընելու բանը՝ անանկ յախտենականութեան թողուցի անօգուտ ու դժուար կերպով մը :

ԲԱԳԵԼԻՔ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹՅՆԵՐ

Ահա ասանկ ճիշդ ու արդար խորհրդածութիւնները շատ կերպ մտքեր կը գրդղեն ներսս :

Նախ և առաջ որ մեղքերուս վրայ ըրած ապաշխարութիւններս ընտոր եղան , արդեօք աս եղանակ ամբողջ , կատարեալ , անկեղծ , ցաւագին . քանի որ ասանկ չեն եղեր , չեմ կրնար կատարեալ ապահովու-

Թիւն մը ունենալ մեղքերու թողութեանը .  
ուստի պէտք է որ քանի ժամանակը ձեռքս  
է, ապաշխարութիւնը ձեռք առնեմ անոր  
կրթութիւններուն տալով զիս . վտանգա-  
ւոր կենակցութիւններու մէջ անցուցած  
ժամանակներս՝ հոգևոր այցելութիւննե-  
րուն անցընելով, Քրիստոսին խաչելու  
թեան առջին, կամ սուրբ Հաղորդութեան  
զիմացը երեսս գետինը մեղքերու հա-  
մար լալով ողբալով :

Երկրորդ կը սորվեցընեն ինծի ապաշ-  
խարութեան արժանի սլառող ընել . ուսս  
սլառողը վրաս ցուցընելու համար՝ պէտք է  
որ մեղքի աւիթներէն փախչիմ, վտանգ-  
ներէն զզոյշ կենամ, ամէն իժիր մեղքին  
վրայ մենձ ատելութիւն ու չափէ դուրս  
սոսկում մը ունենամ, որ այնչափ ցա-  
արժեցին ինծի . ընտոր որ առաջուան  
կեանքս մեզաց սլառողներ տուին, նոյն  
պէս պետքի կեանքս ապաշխարութեան  
սլառողներ տան, զղջումի արցունքի վճար-  
ման հոգիները փառուն պահելով սրտիս  
մէջ :

Երրորդ երկրայութիւն մը կարթնցընեն  
մտքիս մէջ, որ արդեօք ինչուան հիմա ը-  
րած հատուցմունքներս մեղքերու համե-  
մատ եղեր են մի . ու միանգամայն գիտ-  
նալով որ մարդ ըլլալովս՝ զրկեալ Աստու-  
ծոյ շեմ կրնար բաւականաչափ հատուց-

մունք ընել, աս մտքով պէտք է որ ամէն  
վճարմունքներու մէջ խառնեմ Քրիստոս  
սին արունին չարչարանքներուն վէրքե-  
րուն ու մահին արդիւնքները արժանիք-  
ները, միացընելով անոնց հետ իմ խո-  
նարհ ու ցուած սրտիս պատարագն ալ,  
որով մեղքերուս քաւչարար, արդարու-  
թեան, վճարողական ու Աստուծոյ հաճոյա-  
կան պատարագ մը ըլլայ:

### ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ե.

« Զամենայն զպարտանքոյի քեզ » .

ՄԱՏ. ԺԸ. 32:

Թէպէտ իրաւունքը, արդարութիւնը կը  
պահանջեն, որ վրէժխնդիր ըլլամ քեզի,  
թէպէտ բնութիւնը արիւնը, կիրքը կը  
գրգռեն, որ վրէժս առնեմ քեզմէ, թէ և  
ձեռքէս կու գայ ճիշդ չափով մը չափել  
քեզի, ու անդին ևս անցընել իմ վրէժ-  
խնդրութիւնս, բայց ահա ևս կը թողում  
կը ներեմ քեզի, անյիշաչար կըլլամ, կը  
մոռնամ քենէ կրամ զրկանքներս, տե-  
սած անիրաւութիւններս, քաշած վնաս-  
ներս. վասն զի ահա ասանկ լսեր եմ  
Քրիստոսէն, ասանկ հրաման առեր եմ

իրակէ, այսպէս տեսեր եմ իր վրան. որովհետեւ ինքը ներեց ինձի, ու ես ալ թէ որ չեմ ներեր նէ, կը վախնամ որ իմ մեղքերս ալ երեսս կը դարնէ, աղօթքիս ազաւանքիս ականջը կը դուցէ, պատարագներուս երես կը դարձցընէ, արքայութիւնը կը դլանայ ինձի: Ահա ասոր համար ես ալ քու ամէն պարտքերդ թողուցի, ներեցի քեզի, իբր թէ անոնց զիմացը առերընդուներ եմ, դո՛հ եմ եղեր. « Զամենայն զպարտան թողի քեզ »: Թողուցի, բայց այնպէս որ չէ թէ միայն զրկանքին զբրկանք չեմ ըներ, հապա երախտիք ես. չէ թէ միայն ծուռ աչքով չեմ նայիր թշնամիիս, հապա անուշ խնտում երես ալ. չէ թէ միայն անտարբեր կըլլամ վրան, հապա եւելօք սէր բարեկամութիւն ալ կը ցուցընեմ. չէ թէ միայն չեմ ուրախանար անոր ձախորդութեանը վրայ, հապա կը արտմիմ կը ցաւիմ ես անոր վնասին վրայ. մէկ խօսք՝ չէ թէ միայն չեմ անարդեր, չեմ բամբասեր, չեմ զրկեր զանիկայ, հապա կարդարացընեմ, կը յարդեմ, կը ջատագովեմ: Թողուցի ասելութեան՝ սիրով, թշնամութեան՝ բարեկամութենով, չարին՝ բարիով, անէճքին՝ օրհնութեամբ. անիկայ որչափ ատելութիւնը կաւելցընէ, ես ալ նոյնչափ սէրը կաւելցընեմ. անիկայ քանի որ թշնամու-

Թեան մէջ առաջ կերթայ, նոյնչափ ես ալ բարեկամութեան մէջ կը յառաջեմ. անկեայ սրչափ անիրաւութիւնը կը դիզէ, ես ալ այնչափ երախտիքը կը կրկնապատկեմ: Թողուցի, բայց սրտանց. չէ թէ սանկ բերնով մը, հապա սրտանց. չէ խօսքով, հապա նաև գործքով, սիրով յօժարութենով ուրախութենով, առանց բերնիս տալու արանջալու, առանց սրահելու ներսի դիս ոխ մը, և կամ ժամանակին սպասելով իր ատենին վրէժխնդրութիւնս առնելու. թշնամիս հեռուէն տեսնալուս, մէկէն կը վազեմ դիմացը, կը պլլըրուիմ կը փաթթուիմ, հաշտութեան, բարեկամութեան, խաղաղութեան ու սիրոյ սղջոյն ու համբոյր կու տամ, աչքիս արցունքով կը թրջեմ անոր գիրկը, անուշ խօսքերով կը շահիմ գինքը:

Թողուցի, բայց ամբողջ ամենուն համար. կը ներեմ գրկանքին, հալածանքին, շարախօսութեան, դրսպարտութեան, նախատանքին, հայհոյանքին, հարուածին, վէրքին, ինչուան մահին ևս կը ներեմ ունոր, առանց մէկը դուրս հանելու, մէկին վրայ տարակուսելու, իմ դոճս լման ողջակէզ մը կընեմ: Թողուցի, բայց ասոր հիմա աս ատեն, չձգելով ուրիշ ժամանակին, երբ տաճարը մտած, պատարապս սեղանը հանած եմ, երբ կրակը սպանդին



բողոքախօսքը առած է, ծուխը բոցը իրար  
 խառնած կելլայ կը բարձրանայ, երբ ող-  
 ջակէզին անուշ հոտերը կը ծառայի, ահա  
 հոն տեղ անանկ ատեն մը միտքս դալուն  
 յիշելուս, որ եղբարս թէ և անիրաւ տեղ  
 ու անարատճառ վշտացած է իզմէ, մէ-  
 կէն կը ձղեմ կը թողում հոն պատարադս  
 կիսկատար սեղանին վրայ ու կերթամ  
 եղբօրս հետ հաշտութիւն խօսելու, որով  
 անկէց զերազանց ու աստուածահաճոյ  
 դոհ մը կընեմ, սուրբ սեղանին պատուան-  
 դանը չհամբուրած՝ թշնամիիս ուսը համ-  
 բուրելով, դոհը դոհին հետ կը խառնեմ,  
 բոցը ծուխը մէկմէկու վրայ կը դիզեմ .  
 « Զամենայն զպարտան թողի քեզ » : Ահա  
 աս կերպ կըլլայ քրիստոնէական աւետա-  
 րանական ներողութիւնը, Քրիստոսին  
 հեղութեան դրած անուշ լուծը, որ ոչ մի-  
 այն խօսքով կապսպրէ կը հրամայէ, հա-  
 պա իր վրան անոր օրինակը կու տայ, որ  
 չէ թէ միայն զինքը խաչ հանողներուն  
 թողութիւն տուաւ, հապա անմեղադիր  
 ևս կընէ դանոնք իր երկնաւոր հօրը առ-  
 ջին, երբ անոնք լրբութեամբ անդթու-  
 թեամբ դուխը ժողոված, անոր արունը  
 կը վազցընեն, անիկայ նոյնը անոնց յա-  
 յիտենական փրկութեան դին կընէ . ինչ  
 ներողութիւն :

Ահա ասիկայ ինծի օրինակ կըլլայ ներելուս մէջ, յանդիմանութիւն անկէ պակասուելուս, որովհետեւ ասանկ վարդապետի մը աշակերտ, այսպիսի դժած հօր որդի եմ. բայց թէ ինչուան հիմա ասանկ թըշնամիիս ներեցի, ամասնս, մենծ ցաւ, կըսկիծ սրաիս. վասն զի քանի անգամ որ ետ մնացի պակասուեցայ աս պարտքիս մէջ, անչափ անգամ դրեթէ քրիստոնէ ըլլալէս պակասուեցայ, Քրիստոսին աշակերտութենէն դուրս ելայ, իր նամանակցութենէն վերջացայ, իրեն հրամանին անհնազանդ եղայ: Աւստի հիմա ասանկ մէկ մենծ պարտաւորութեանս մէջ պակասաւոր ըլլալուս վրայ ցաւելով, նոր ու արիական որոշմունքով մը կողքօր յանցանքը ներելու կըսեմ իրեն, « Զամենայն զպարտսն թողի քեզ »:

ԲԱՂԵԼԻՒԲ ՊԵՐՏԵՒՈՐՈՒԹՒՒՆՆԵՐ

Ահա ասանկ յորդորական խորհրդածութիւնները նորանոր պարտաւորութիւններ առջեւ կը դնեն:

Նախ և առաջ կիմացընեն ինծի քրիստոնէական ներողութեան պարտքս. ուստի ինչպէս պէտք է ինծի ներել թողուլ անյիշաչար ըլլալ կողքօրս անիրաւութեան, մէկ վեհանձն առատաձեռնութենով ու

դիւցադնական առաքինութիւնով մը, սըր-  
տանց ներելով անոր ինծի դէմ ըրած զըր-  
կանացը ու վնասին, որպէս զի պարտա-  
ւոր ընեմ՝ զՍտուած ալ թողութիւն տա-  
լու ինծի իրեն դէմ ըրած մենծ մենծ մեղ-  
քերուս :

Երկրորդ կը սորվըցընեն ինծի ներելու  
եղանակը Քրիստոսի օրինակին վրայ .  
ուստի ինչպէս պէտք է ինծի ներել եղ-  
բօրս, այսինքն չէ թէ միայն չարին դէմ  
չար, թշնամութեան դէմ թշնամութիւն  
չընել, հապա անէծքին օրհնել, չարին  
բարի ընել, ատելին սիրել, որով երկնա-  
ւոր հօրը Քրիստոսին նմանող սիրելի որ-  
դի ըլլալ :

Երրորդ կը սորվըցընեն ներելու միջոցը,  
դնելով աչքին առջին զՅիսուս Քրիստոս  
ի խաչ ելեալ, որ ամէն պատճառներէն  
վեր կը համոզէ, կը շարժէ զգալի կընէ ին-  
ծի . հոն Քրիստոս տէրն մեր զինքը խաչ  
հանողներուն չէ թէ միայն թողութիւն  
կու տայ, հապա անոնց համար երկնաւոր  
հօրմէն աղէկութիւն կուզէ, անոնց ըրած  
աստուածասպանութեան մենծ մեղքը գո-  
ցելով, անմեղադիր ընելով, չզիտնալնուն  
տալով . անոր համար քանի որ աս առա-  
քինութեան առիթը կը պատահի, պէտք  
է ինծի որ խաչելութեան աչքս դարձցը-  
նեմ, զարմանամ սքանչանամ Քրիստո-

տին անտխակալութեանը հեղութեանը համբերութեանը, իր օրինակէն յորդորւիմ, սորվիմ թշնամիիս ներելու եղանակը, օրինակը ու միջոցը:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Զ.

«Վարդապետ, եկից և ես զկնի քո, յոր վայր և երբիցես» .

ԲԱՏԹ. Ը. 19:

Իրաւցընէ եռացկոտ, նախանձաւոր, հնազանդ աշակերտ՝ որ միշտ իր վարպետին ետեէն երթալ կուզէ, ու ամեննին շիթողուր զինքը, չհեռանար չղատուիր իրմէն, որչափ դժուար ճամբաներ ըլլան նէ, յօժարութենով ուրախութենով կը քալէ, միայն որ իր վարպետը առջեէն երթայ ու ինքը ետեէն դայ: Ոհ, ո՛ր էր որ ես ալ ասանկ հաւատարիմ, եռացկուն, նախանձախնդիր աշակերտ մը ըլլայի Յիսուսիս ու ըսէի ասանկ. «Վարդապետ, եկից և ես զկնի քո, յոր վայր և երբիցես»: Գուն իմ մէկ հատիկ վարպետս ես՝ որ աստուածաբաշտութեան շիտակ ճանապարհը կը ցուցընես կը սորվեցընես ինձի. ո՛րչափ բաղձալի է ինձի ամէն իժիր և տեէդ դալ ու քեզի անբաժան ընկեր ըլլ.

լալ: Բայց Քրիստոսին ճամբան նեղ է,  
 փուշ ու քար է, Գողգոթա լեռը կը հա-  
 նէ, Քրիստոս խաչուելու մեռնելու կեր-  
 թայ. Քրիստոսին երթալու տեղերը ցա-  
 ՚ի ու տառապանքի տեղ է. ո՞վ սիրա կընէ  
 ասոր, ո՞վ յանձը կառնէ ասանկ բնու-  
 թեան ներհակ ճամբաներ քալել. իրա է՝  
 ցաւին կարժէ, ո՞վ կուրանայ սսիկայ,  
 բայց հոգ չէ, ինչու որ երբոր միտքս կը  
 բերեմ՝ որ Յիսուսին իմ աստուածային  
 վարպետիս ետեէն կերթամ, որ բուն ճա-  
 նապարհ, ճշմարտութիւն ու կեանքն է,  
 ամէն դժուարները ղիւրին կը սկսին զալ.  
 Գողգոթան Թափօր կերևայ աչքիս, խա-  
 չը զահ մը կը ձևանայ, փռէ պսակը վարդէ  
 պսակ կը համարուի. քանի որ կը մտմը-  
 տամ որ Քրիստոսին հետ կերթամ, սպան-  
 դանոցը հարսնիքի տուն, զերեզմանը պար-  
 տէզ կը փոխուի. որչափ որ Յիսուսին օ-  
 րինակը առջևս ունիմ, որ խաչը դրկած,  
 փշով պսակած, դիմացէս կերթայ, ալ բը-  
 նութեան դրզմունքը չեմ զգար, ան եր-  
 ջանկութիւնը, ուրախութիւնը՝ որ անոր  
 ետեէն երթալուն կիմանամ, խաչին ծան-  
 բութիւնը, փշերուն խայթը չզգացնելու ին-  
 ծի. երբ կը մտմտամ որ Քրիստոսին հետ  
 մեռնելու կերթամ, նոյն իսկ մահը ճշմա-  
 րիտ կեանք մը կըլլայ ինծի, ինչ ուրա-  
 խութիւն. որպիսի՛ խնտում՝ խաչուելուն

մեռնելուն մէջ Յիսուսը իրեն խաչակից մահակից ունենալ : Ահա ասանկ կը մտածէ , ասանկ կըսէ ու կընէ Յիսուս վարդապետին հարազատ աշակերտ եղողը , որ անոր տուած դասերը աղէկ սերտած է , անոր ճշմարիտ սէրն ունի , չուզեր անկէ բաժնուիլ , անկից դատուիլ մնալը մահ կը սեպէ իրեն , հապա ուրախութենով անոր ետեէն կը քալէ կերթայ մահին արունթաթաղ ճամբաները . « Այարդապետ , եկից ե ես զկնի քո , յոր վայր ե երթիցես » :

Ահա քրիստոնէին քալելու ճամբան . բայց ահա ես ալ՝ որ քրիստոնեայ եմ , որչափ տարբեր ճամբայ ունիմ . ես անանկ աշակերտ մըն եմ Վրիստոսին՝ որ մինչև թափօր լեռն ու պարտէզը կերթամ ետեէն , ու անկից անդին չէ . հոն տեղ վերջին հրաժարական բարես կու տամ իրեն , մընաք բարովս կըսեմ , կը կտրեմ դուրս կելլամ իր հաղորդակցութենէն : Ի՛նչ չափ ասանկ աշակերտներ ունի Յիսուսը , որ պիտի վարդապետին ընտոր աշակերտ : Բայց ահա չխաբեմ ես զիս քրիստոնէ ըլլալուս , ու չպարծենամ պարապ տեղ ասանկ անունի մը վրայ . վասն զի աս զեղեցիկ անունը կրնայ իրաւ մենձ համարմունք մը տալ լսողին մտքին , իմացընելով ինչ հաւատքի տէր ու որին հետևող ըլլալս . բայց ահա Աստուծոյ քովը իմին

քրիստոնէութեանս բուն էութիւնը՝ Քրիս-  
 տոսին նմանակցութեան վրայ կեցած է,  
 անոր հետ կապուած է նախասահմանու-  
 թիւնս, անով ընտրեալներուն կարգը կը  
 մտնամ, ու որչափ որ աս նմանակցութիւ-  
 նը վարքիս վրայ աւելի կը տեսնուի, այն-  
 չափ աւելի քրիստոնեայ եմ ու համար-  
 ձակութիւն կունենամ պարծենալու քրիս-  
 տոնէ ըլլալուս: Ես քրիստոնեայ եմ. թէ  
 որ անունիս հետ կապուած պարտաւորու-  
 թեանս մէջը պակասիմ՝նէ, անունով քրիս-  
 տոնեայ ու զործքով անհաւատ, դրսէն  
 քրիստոնեայ ու իրօք հեթանոս. ինչ օգուտ  
 կընէ ինծի աս անունը, թէ որ անոր զործքը  
 չունիմ, միթէ անու նս պիտոր փրկէ զիս, չէ  
 նէ զործքս: Ինչ ամօթ, որ ասանկ սուրբ  
 նուիրական Քրիստոսի անուն մը կանչուի  
 վրաս, երբ անոր նմանութիւն չունիմ, ա-  
 հա Քրիստոսը սուրբ, արդար է ու ար-  
 դարութիւնը սիրող, ես մեղաւոր, մեղքը  
 սիրող. Քրիստոս հեղ ու խոնարհ է սըր-  
 տով, ու ես հպարտ ու բարկացող. Քրիս-  
 տոս դատեր է որ ճշմարիտ մենծութիւնը  
 խոնարհ ըլլալուն վրայ կեցած է, ստոյգ  
 հարստութիւնը հոգւով աղքատութեան  
 մէջը կը գտնուի, մարդկանց աչքը եղողը  
 Աստուծոյ երեսէն ընկած է. զէչին պէտք  
 է բարի ընել, հայհոյանքին զրկանքին ե-  
 րախտիքով ու օրհնութեամբ փոխարինել:

բայց ահա իմ դատմունքներս ասոնցմէ  
 փախչիլ ու ասոնց հակառակ սկզբունք-  
 ներ բանեցընել է . Քրիստոս փշէ պսակ  
 ունի դուխը , ու ես անոր տակը փափուկ  
 անդամ՝ մըն եմ : Բայց պարապ տեղ չխա-  
 բեմ՝ ես դիս , Քրիստոսին բուն աշակերտը  
 անիկայ է՝ որ ամէն բանը մէկդի թող  
 տուած , դինքը ուրացած , Քրիստոսին ե-  
 տեէն կերթայ ու անոր խաչի ընկեր կըլ-  
 լայ մէկ արիակաւ որոշմունքով մը ըսելով  
 իրեն , վարդապետ ահա ես ամէն բանս  
 թողուցի ու ետեէդ եկայ , ինչ փոխարէն  
 պիտի ընես ինձի . ու նոյն ատեն կը լսէ ան-  
 կէ պատասխանը , դուն՝ որ ամէն բանը  
 թողուցիր ու ետեէս եկար , երկրորդ գա-  
 լուտիս փառաւոր աթոռը կը նստիս ու  
 դատելու իշխանութիւն կառնես :

Ես ասկէ մաս չունիմ , ինչու որ իմ  
 խելքիս զգայութիւններուս ուզածին կը  
 հետեիմ , անոնցմէ դաս կառնեմ , անոնք  
 ինձի առաջնորդ վարպետ կընեմ . անոր  
 համար ինչպէս որ համարձակութիւն չեմ  
 ըներ ըսելու իրեն աս խօսքը , անանկ ալ  
 տրժանի չեմ լսելու իրմէ անպատասխանը :

ՔԱՂԵԼԻՔ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ահա աս եղանակ յորդորական խոր-  
 հրդածութիւններ Քրիստոսին նմանակ-



ցութեան վրայով, շատ պարտաւորութիւններ առջիւս կը դնեն:

Նախ և առաջ երեսու կու տան իմ թուլութիւնս վախկոտութիւնս, որ քիչ մը դժուարութենէն աշխատանքէն կը փախչիմ կը վհատիմ. ուստի ինչպէս պէտք է ինծի քրիստոնէական արիութիւն մը Քրիստոսին նմանելու՝ որուն բովանդակ կեանքը մահացուցմունք եղան, ուրկից հետեւ բար կը պահանջուի՝ որ իմ կեանքս ալ անոր մահին շարունակութիւն ըլլայ ապաշխարութեան սուրբ կրթութիւններով:

Արկորդ պարտաւորութիւն մը առջիւս կը դնեն՝ Քրիստոսին օրինակը կեանքիս գործքերուն կանոն ու չափ մը ընելու. ուստի ինչպէս պէտք է ինծի ամէն գործքերուս մէջ նոյն հոգին, նոյն դիտմունքը ու նպատակը ունենալ, զորն որ Քրիստոս բանեցուց, այսինքն Աստուծոյ փառքը, սէրը, աստուածային կամացը համաձայնութիւնը, ամէն ներսի դրսի տրամադրութիւններուս մէջ նկարելով վրաս զՅիսուս Քրիստոս ՚ի խաչ ելեալ:

Արկորդ հոգևոր եռացք, մխիթարութիւն ու արիութիւն մը կու տան ինծի խաչը զրկելու, խաչին վրայ մնալու ու խաչով վայելելու, որովհետեւ խաչեալ Յիսուսին ընկեր կընէ. հապա ինչպէս պէտք է ինծի քրիստոնէական պարտաւորութիւններ

բուն մէջ համբերութեամբ հանապազօր-  
դութիւն մը ունենալ, ինչուան վերջը նոյն  
ջանքով ու եռացքով շարունակելու բարի  
դիտաւորութիւններուն ու սուրբ որոշ-  
մունքներուն մէջ:

## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Է

« Արդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր  
խռովեա գիս » .

ՍԵՂՄ. ԽԲ. 7:

Ով անձն իմ, ըսէ ինձի. ինչո՞ւ աս մու-  
թը, տրտամութիւնը եկեր է վրայդ. ինչո՞ւ  
համար աս մտմտուքը ծփանքը առեր են  
դքեզ. չեմ տեսներ երեսիդ վրայ ան ա-  
ռաջուան կայտառութիւնը գուարթութիւ-  
նը ուրախութիւնը. ինչո՞ւ ասանկ օր օր-  
ւան վրայ կիյնաս, կը հալիս կը մաշիս.  
Ինչ վիճակ է ատ վիճակը՝ որուն մէջ կը  
տեսնամ դքեզ այսօր. « Արդ ընդէ՞ր տըր-  
տում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովեա  
գիս » : Ահա ինչու որ, կամ սիրտդ կիրքէ  
մը վրդոված սկիտի ըլլայ՝ ներքին խաղա-  
ղութիւնդ կորսնցընելով, կամ խղճմը  
տանքդ բարի վկայութիւն չտար քեզի յան-  
ցանքի մը տէր ըլլալով, սպատիժէն վախ

ունիս : Ինչու որ , անանկ բան մը կուզես՝  
 որ ձեռքդ չէ , չես ուզեր ան բանը՝ որ Աս-  
 տուած կուզէ , ու կուզես ան բանը՝ որ  
 Աստուած չուզեր . Աստուծոյ հետ ծեծ  
 բացեր ես , ու Աստուած քու հետդ : Ին-  
 չու որ , բանէ մը չես ուզեր անցնիլ , չափէն  
 աւելի կապուած ես կարծիքիդ հետ , հան-  
 դրատութենէդ չես ուզեր ետ մնալ , հեշ-  
 տալի կեանքը կը սիրես , շատ փափուկ  
 ես վրադ , քիչ յարդ ունիս առաքինու-  
 թիւններուն : « Ընդէր տրտում ես » . Ին-  
 չու որ , խոնարհութիւն չունիս , չափէն ա-  
 ւելի համարմունք ունիս վրադ . ամէնքը  
 պարտաւոր կը համարիս քեզի , երբոր Աս-  
 տուծոյ մեծամեծ պարտաւորութիւններ  
 ունիս . Թեթե պատիժի մը արժանի չես  
 սեպեր դքեզ , երբոր դժոխքին մենձ պա-  
 տիժին արժանի ես : Ահա այսպիսի բա-  
 ներ են հիմակուան տրտմութիւններուդ ,  
 խռովութիւններուդ բուն պատճառը , թէ  
 որ լաւ մը քննելու ըլլաս . ցաւակցելու  
 ախտակցելու վիճակ : Երեւէկ ան մարդուն՝  
 որ Աստուծմէ՛ ՚ի դատ մէկ մը չսիրեր , մի-  
 այն զԱստուած մենձ կը համարի . ամէն-  
 քը կորսուած կը սեպէ իրեն՝ որոնք կըր-  
 նայ կորսնցընել , չկապուիր բանի մը հետ՝  
 որ կրնայ յափշտակուիլ ձեռքէն , թէպէտ  
 ամէն բանը կորսնցընէ , խաղաղութիւնը  
 չկորսնցընիր , ամէնը Աստուծոյ կը յան-

ձնէ, ու միշտ գոհ կըլլայ: Ես ասանկ չընելուս համար, երկուք ու մէկ ասանկ կը գտնամ զիս խնոված ու տրտմած:

« Արդ ընդէր տրտում ես »: Ահա քու չարդ անչափ մենծ բան մը չէ, ինչչափ որ կերենայ քեզի, մանաւանդ որ ան հիմա զլուխդ եկած փորձութիւնները՝ Աստուծոյ ողորմութեան նշաններ են, ճախորդութիւնները հոգի փրկութեանդ միջոց մըն են. վասն զի անոնք են որ աշխարհէս կը փրցընեն կը դատեն զքեզ, Աստուծոյ հետ կը միացընեն, ինքը զինքիդ քաշել կուտան, աս կեանքը զզուելի կընեն, մեղքին սոսկումը սիրտդ կը դնեն՝ հիմակուրնէ պատիժին համտես ընելով: Քու ցաւդ մենծ բան մը չէ. ինչու որ, թէ որ թեթեւ է նէ՛ շուտով կը յաղթուի, թէ որ մենծ է նէ՛ երկան չքշեր, թէ որ հնարքով չըլլար նէ՛ ինք իրմէ կը հալածի կերթայ, միայն զըժոխքին չարը յախտենական ըլլալով վախնալու է. ժամանակը առանց մտածելու ամէնը կընէ. ցաւը կեանքէդ աւելի չքշեր, որ ինչ է յախտենականութեան քովը: Մտածէ որ աշխարհիս մէջը առանց ցաւի ըլլալ չըլլար. ընտոր կրնաս Քրիստոսին հանդիստ փափուկ անդամ ըլլալ անանկ չարչարեալ մարմինի մը, թէ որ անոր հետ չես քաշեր, չես խաչուիր, չես մեռնիր. ինչպէս կրնաս անոր պէս

յառնել փառաւորուիլ ու վայելել : Յու-  
ցուր ինձի առանց խաչի սուրբ մը , անոնց  
քանիի չարժեց արքայութիւնը , որոնք  
զրեթէ իրենց արունին զինովը ծախու ա-  
ռին : Միտքդ բեր արքայութիւնը , որուն  
պահեկէ մը կրնաս արժանի ըլլալ ու ահա  
ամէն տրամութիւնդ խոսովութիւնդ հալա-  
ծուի երթայ . նայէ պսակին , տես փառ-  
քին մենծութիւնը՝ որ վերը պատրաս-  
տուած է . մենձ բարիի մը յոյսը մենձ ալ  
ուրախութիւն կը բերէ , պզտիկ է ամէն  
նեղութիւնը՝ որ յախտենական ուրախու-  
թեան մը զին կըլլայ . թեթև է ամէն վիշ-  
տը՝ որ յախտենական պատիժէ մը կը  
խալսէ . անուշ է ամէն արցունքը՝ որ զը-  
ժոխքին կրակը կը մարէ . մարմինը ցաւ  
չզգար , երբոր սիրտը երկինքն է :

« Ընդէր տրտում ես անձն իմ , կամ ըն-  
դէր խոսովես զիս » : Ինչո՞ւ ուրեմն աս յու-  
սահատութիւնը , լքումը , տարակուսան-  
քը ալ ասեր . նստեր ես , չես զիտեր որ  
համբերութեամբ ամէն բանը կը լմնայ ,  
ամենուն վերջը կու գայ , ամէնը կը յաջո-  
ղի . զօրացիր , կտրիճ եղիր , մի վախնար ,  
օր մը ետքը աս տխուր սև ամպերը կը փա-  
րատին , փոթորիկը կը դադրի , աս սգա-  
ւոր տրտում օրերուն պայծառ ուրախ օ-  
րեր կը յաջորդեն . ձմեռը կանցնի , զարու-  
նը կու գայ . չես զիտեր որ զարունը անուշ

հովեր չեն փչեր, թէ որ ճմեռուան մրրիկը  
 օդը չեն մաքրեր նէ . ամառը պարտէզնե-  
 րուն մէջը ջրերուն դուարձալի ձայները  
 չեն լսուիր, թէ որ ճմեռուան սաստիկ  
 անձրևները հեղեղներ չեն հաներ նէ .  
 դաշտերը կանանչ խոտերով գոյնզգոյն  
 ծաղիկներով չեն զարդարիր, թէ որ ա-  
 ռաջ ճերմակ ձիւնով չեն ծածկեր նէ: Թէ  
 որ ցաւերդ շատ սաստիկ, նեղութիւններդ  
 շատ անտանելի, տրտմութիւններդ ետքի  
 աստիճան են նէ, մտածէ որ մեղաւոր ես,  
 դժոխքին արժանի եղար . դժոխքին ար-  
 ժանի եղող մարդուն պէտք է որ ամէն  
 ծանրը թեթև երևնայ: Մխտրդ բեր որ  
 քրիստոնեայ ես, Քրիստոսին ետեէն դա-  
 ցող մարդուն պէտք է որ ամէն լեղին ա-  
 նուշ գայ . մտմտա որ արքայութիւն չեր-  
 թցուիր առանց խաչ քաշելու, արքայու-  
 թիւն խնդրող մարդուն պէտք է որ ամէն  
 դժուարը դիւրին գայ:

Գուն ահա ասանկ մէկ քիչ բանէն  
 տակնուվրայ կըլլաս, խաղաղութիւնը կը  
 կորսնցընես, չես ուզեր քիչ մը համբե-  
 րել, ինչու որ՝ քիչ հաւատք ունիս, շատ  
 հաւատք ունեցողը շատ կը համբերէ . ո-  
 րովհետև զիտէ որուն ձեռքով խաչը կը  
 խրկուի, որուն համար կընդունուի, որուն  
 հետ կը տարուի: Գուն կը խառովիս չես կըր-  
 նար քիչ մը համբերել, ինչու որ՝ քիչ յոյս

ունիս, շատ յոյս ունեցողը շատ կը համբերէ. որովհետեւ տանջանքին մէջ պատկը կը տեսնայ, գերեզմանին մէջ անմահութեան լոյսը աչքին կը դարնէ: Գուն կը տրտմիս, յանձգ չես առնել. քիչ մը համբերել, ինչու որ՝ քիչ կը սիրես, շատ սիրողը շատ կը համբերէ, որովհետեւ անուշ է իրեն իր սիրելւոյն համար բան քաշելը, իր սիրելիին սէրը ամէնը սիրելի կընէ իրեն: Ահա ասոր համար ասանկ տրտում ու խռովեալ ես, որովհետեւ հաւատքիդ, յոյսիդ, սիրոյդ մէջ պակասաւոր ես. ուստի կորսընցուցած մտքի հանդարտութիւնը, սրտի խաղաղութիւնը նորէն ձեռք բերելու համար ամբողջ հաւատքդ, հաստատէ յոյսդ, վառէ սէրդ, ուրախ եղիր ու ճխա, քանի որ ասչափ ուրախանալու պատճառներ ունիս ձեռքդ:

ՔԱՂԵԼԻՔ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ահա այսպիսի մխիթարական խորհրդածութիւնները դանազան մտքեր կազդեն ինձի:

Նախ եւ առաջ կը սորվցընեն ինձի զիս ուրախ պահելու միջոցը. պէտք է որ մեղքը, կիրքը, աւելորդ սէրը դուրս ընեմ ինձմէ. վասն զի ինչ ուրախութիւն կրնայ ունենալ մարդ մը, քանի որ մեղքով Աս-

տուժոյ թշնամի ըրած է զինքը , կիրքով  
 պաշարեալ , ու սիրտը աշխրթիս հետ կա-  
 պուած է , ուրկէց առանց ցաւի չփրցուիր .  
 ճշմարիտ սրտի խաղաղութիւն ունենալու  
 համար՝ պէտք է բոլոր յոյսը Աստուծոյ  
 դնել , իրեն նախախնամութեանը յանձ-  
 նուիլ , իր ամենասուրբ կամքին միաբանիլ ,  
 ամէնը անոր ձեռքէն անտարբեր միօրի-  
 նակ ընդունիլ :

Երկրորդ կը սորվցընեն ինծի ուրախ ըլ-  
 լալու կերպը . պէտք է որ մէկդի ձդեմ՝ նա-  
 խապաշարմունքը , աւելորդ հոգը . մարդիկ  
 խեղճ են , որովհետեւ խեղճ կը բռնեն զի-  
 րենք . ես ուրախ կըլլամ՝ թէ որ խղճմը-  
 տանքիս խորհուրդ կը հարցընեմ , չէ թէ  
 կարծիքին , երբոր հաւատքին , չէ թէ խե-  
 լապատակին վրայ կը դատեմ կը կարգա-  
 տրեմ ես զիս :

Երրորդ առջևս կը դնեն համբերութեան  
 հարկաւորութիւնը . պէտք է ամէն իժիր  
 պատրաստել զիս փորձութեան Աստուծոյ  
 ծառայութեան մէջը , որովհետեւ առանց  
 խաչի մեղքերուն վրայ ապաշխարել , ար-  
 քայութիւն մտնալ չըլլար . որ աս ալ դը-  
 ժոխքին յախտենականութեան մտած-  
 մունքով ու հաւատքի , յոյսի , սիրոյ ներ-  
 դործութիւններովը միայն կրնայ ըլլալ :



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ը .

« Աստուած իմ, ընդէ՞ր բողեր զիս » .

ՄԱՐԿ . ԺԵ . 34 :

Աս խօսքը երբեմն Քրիստոսին բերանը խաչին վրայ , բայց հիմա իմին բերանս ուրիշ նշանակութիւն ու տարբեր իմաստներ ունենալով , ուրիշ համի ալ փոխուեր է : Ահա եղաւ ատեն մը որ սաստիկ փորձութիւններուն ալէկոծութեան , հալածանքին փոթորիկներուն զիմացայ , բիւրաւոր թշնամիներուն կտրճութեամբ զիմացը ելայ , զամէնքը յաղթեցի հալածեցի եւս դարձուցի . ինչու որ , Աստուած իմ , դուն ինծի հետ էիր , ինծի հետ կը պատեւրազմէիր , օգնական , պաշտպան ու փրկիչս էիր , քու կին երկնաւոր այցելութիւններդ անպակաս կուրախացընէր զիս , նեղութիւններուս մէջ զօրաւոր շնորհքներդ կուժուցընէր , հոգևոր ցամաքութիւններուս մէջ երկնքին ցօղերդ կը դուլացընէր զիս , տրամութիւններուս մէջ մխիթարանք կը լլար երեսիդ լոյսը , վէրքերուս ցաւերը բանելուն՝ սիրոյդ զգուանքներն ու հոգւոյդ սուրբ օճմունքները կը մեղմէր ,

կը բարեխառնէր կը թեթևցընէր զիս .  
բայց հիմա մութը, ճմեռը, ամպերը միան-  
գամայն կոխեցին վրաս, ամէն կողմէն  
առին պաշարեցին զիս, մեղքերուս ծան-  
րութեան տակը ճմլեցայ մնացի, թշնա-  
միներուս ձեռքը խաղալիկ եղայ, չմնաց  
զօրութիւն վրաս անոնց դէմ դնելու, ամ-  
մէն կողմէն անոնց նետերուն մէջ տեղ  
նպատակ եղայ մնացի . ինչու որ՝ ասանկ  
լիք թողուցիր զիս երեսի վրայ, ամէն հայ-  
րական խնամքներէդ, հոգևոր գէնքերէդ,  
երկնային այցելութիւններէդ ու շնորհաց  
լոյսերէդ զուրկ ձգեցիր զիս ապականեալ  
ախտաւոր բռնաւոր բնութեանս ձեռքը :  
Բայց կը հարցընեմ, ով Աստուած իմ, ին-  
չո՞ւ թողուցիր զիս, « Աստուած իմ ընդէր  
թողեր զիս » . ինչ է արդեօք ասոր պատ-  
ճառը . կերևնայ թէ՛ ինչու որ ես մենձ հա-  
մարմունք մը ունեցայ վրաս, բան մը կար-  
ծեցի զիս, կատարեալ մարդու մը տեղ  
դրի, անձիս չափը չզիտցայ, ինքնահա-  
ւանութենով ու մարդահաճութենով խըլ-  
ցայ կուրցայ, հպարտութենով ամբար-  
տաւանութենով լեցուեցայ, սնապարծու-  
թենով յանդգնութենով առաջ նետեցի  
զիս, ուժիս իմաստութեանս ճարպկու-  
թեանս ապաւինեցայ . կարծեցի որ ես ինք-  
իրմէ զլխուս կարող եմ իմին թշնամի-  
ներուս յաղթելու . անոր համար պէտք ե-

դաւ որ ձեռքդ վրայէս քաշես, շնորհքներդ պարգևներդ խլես առնես ձեռքէս, ասանկ մերկ աղքատ կարօտ զիս ինծի թողուս, որպէս զի չարաչար իյնալովս, իմացընես ինծի իմին ինչ ըլլալս, ձեռքով շօշափել տաս ինծի անիկայ՝ որուն որ մտքովս չէի հաւտար, ստիպես զիս քեզի գալու զիմելու, քու զիրկդ իյնալու, քեզի կռթընելու՝ որուն վրայ կեցած է իմին յաղթութիւնս:

« Աստուած իմ, ընդէր թողեր զիս » . ինչու որ՝ ես իմին կարօտութիւններուս մէջ ցաւերուս ժամանակը քուկին մխիթարութիւնդ փնտրուելու տեղ՝ աշխարհիս ստեղծուածներուն դարձայ, անոնցմէ ճար ուղեցի, ճամբայ փնտրուեցի . ուստի սէտք եղաւ որ պահես ծածկես քեզ աչքէս, արևուդ լոյսը զոցես, չցուցընես դրեղ, ինծի այցելութիւն չընես . անանկով մշուշը մութը ինջաւ վրաս, ցաւերս զայրացան, օրերս լեղիցան ինծի, որպէս զի հիմակու վնասովս սորվիմ իմին ետքի օգուտս, ստեղծուածները ձգեմ, ստեղծողիդ դառնամ, որ իմին մէկ հատիկ բըծիչկա մխիթարիչս ես: « Աստուած իմ, ընդէր թողեր զիս » . ինչու որ՝ դեռ շատ զիաց անկատար էի, կիրքերս չէի կըրթած, առաքինութիւններուն մէջը վարժութիւն չունէի, քեզի ունեցած սէրս մէկ

տկար, անհաստատ, թոյլ, անգործունեայ սէր մըն էր, հաւատարմութիւնս խոստմունքներս փորձի կը կարօտէր, դեռ ինտոր որ պէտք է նէ՝ հաստատուն մտքերու տէր չէի. ուստի պէտք եղաւ որ ձգեն թողուս զիս փորձութիւններուն բովին մէջ, կրակներով բոցերով այրես տոչորես, որպէս զի անոնցմով աղէկ մը մաքրես սրբես, ընտիր, զուտ, մաքուր, փայլուն ոսկի ընես, հաստատես կիրթ ընես առաքինութիւններուն մէջ:

« Աստուած իմ, ընդէր թողեր զիս » . ինչու որ՝ ես երկան ատենէ՛ի վեր խաղաղութեան մէջը մնալով, անհոգ, յոյլ թոյլ կեանքի մը տուեր էի զիս, շատ փափուկ շահախնդիր զիրասէր եղեր էի. ուստի պէտք էր որ քիչ մը ժամանակ թողուս զիս թշնամիներուն մէջ, փորձութեան կատաղի ալիքներ շարժես վրաս, վիշտերու հալածանքներու փոթորիկներ խրկես ինձի դէմ, որպէս զի առջի թուլութիւնը վատութիւնը մէկգի ընելով, աչքս բանամ, նորէն առջի զգաստութիւնը, զգուշութիւնը, արթնութիւնը, եռացքը ձեռք առնեմ, նոյն հանապազորողութենով արիութենով հոգևոր ձեծս շարունակեմ, աւետարանական առաքինութեանց ասպարէզին մէջ ինչուան վերջը առանց թուլնալու առաջ երթամ: « Աստուած իմ, ընդէր թողեր

զիս » . վասն զի կը սիրէիր զիս , ու զի-  
 տէիր որ ես ալ քեզ կը սիրեմ , կուզէիր  
 որ քեզի համար բան քաշեմ , ինչպէս որ  
 ատեն մըն ալ Քրիստոսին դուրցեր էիր ,  
 չարչարանաց լեղի բաժակը վերէն խրկե-  
 լով . ուստի աս մտքով հրամայեցիր թող  
 տուիր որ նեղուիմ չարչարուիմ , ձախոր-  
 դութիւններ խրկեցիր , փորձանքներ բա-  
 ցիր զլխուս , որպէս զի անանկով աւելի  
 պայծառ փայլուն փառաւոր երեցընես  
 պսակս , քու մենձ կարողութիւնդ ցուցը-  
 նես , վերջին աստիճան ցածութենէն ետ-  
 քի աստիճան բարձրութեան հանելուն  
 մէջը , թշնամիներու ամօթ երեսին ու ին-  
 ծի անմահ պարծանք : « Աստուած իմ , ըն-  
 դէր թողեր զիս » . թողուցիր զիս կըսեմ ,  
 բայց միթէ իրաւցընէ թողուցիր , մինակ  
 քիչ մը սանկ սլահեցիր դքեզ աչքէս , զի-  
 մակով մը միայն երեսդ ծածկեցիր , բայց  
 իրօք չէիր թողուր ամենեին , քովս էիր ,  
 մօտիկ կայներ էիր , ետեէս կեցեր կը զի-  
 տէիր . ես երբոր թշնամիներուն մէջը մը-  
 տած կը կռուէի , դուն պսակ ձեռքդ պա-  
 տերադմին լմնալուն կը սպասէիր որ ե-  
 րևաս ու պսակ ձեռքդ երևաս . ես երբոր  
 դռին սեղանը ելամ կայրէի կը տոչորուէի  
 բոցերուն մէջ , դուն իմին խոնարհ սրտիս  
 ողջակէզին անուշ հոտերուն լուսեամբ  
 կը դմայէիր վերէն , որ լմնցածին՝ վար-

գերով ծաղիկներով ծածկես . ես երբոր  
 նեղութեան ու տառապանաց խաչին վրայ  
 խշխշուկ ցաւերուն մէջ կը մորմոքէի կը  
 մարմրէի , դուն վերէն ձեռքդ ընդունելու  
 կերպով բացած , զլսուս վերեր կը սպա-  
 սէիր որ Յիսուս որդիիդ պէս մեռնիմ ա-  
 նոր վրան , որպէս զի շուտ մը արքայու-  
 թեան դռները բանաս , հարկինքով ըն-  
 դունիս զիս : Մէկ խօսք՝ ես երբոր ներքին  
 կեանքին մահացուցմունքներուն գերեզ-  
 մանը երեսս հողին կը տքառքայի կը հե-  
 ծէի վիրաւորածներուն պէս , դուն օր մը  
 ետքը պահեկէ մը փառաւորուած մարմ-  
 նով ուրախ խնտումերես երենայիր պիտի  
 ըսելով ինչո՞ւ կու լաս , մի լար , չորցուր  
 սրբէ աչքիդ արցունքը , խաղաղութեան  
 ուրախութիւնը հաստատէ սրտիդ մէջը ,  
 հոս եմ , մի վախնար :

Անոր համար ճշմարիտը ըսելով , չթո-  
 ղուցիր զիս , դրսէն միայն թողուցիր , ներ-  
 սէն հողով աւելի միանալու ինձի հետ :

ՔԱՂԵԼԻՔ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹՒՒՆՆԵՐ

Ահա ասանկ իմաստալից խորհրդածու-  
 թիւններ մը , շատ կերպ ազդմունքներ կը-  
 նեն ինձի :

Նախևառաջ կիմացընեն որ ինչ համար-  
 մունքի ու որպիսի մտքերու տէր ըլլալու

եմ իմին վրայօքս . պէտք է որ չապաւի-  
նիմ իմ անձիս խելքիս ճարտարութեանս,  
աղէկէն համոզուելով որ ես ինծի մնալով  
թեթեւ փորձութենէ մը կը յաղթուիմ, քիչ  
մը դժուարութեան չեմ կրնար դիմանալ,  
պզտի բարեգործութեան մը տէր չեմ կըր-  
նար ըլլալ . ուստի ամէն իժիր աչքս եր-  
կինքը պիտոր ըլլայ, զիչեր ցորեկ սալա-  
սելով երկայնմտութեամբ աստուածային  
նախախնամութեանը :

Երկրորդ կիմացընեն ինծի նեղութեան  
ու ցամարտութեան ատեններս առանց մը-  
խիթարութիւն փնտրուելու աշխարհէն ու  
ստեղծուածներէն, Աստուծոյ դառնամ  
դիմեմ, համբերութեամբ սպասեմ անոր  
երկնաւոր այցելութեանը, հոգևոր սուրբ  
յաւիտենական մտածութիւններով չափա-  
ւորեմ գործածեմ զիս :

Երրորդ կիմացընեն որ չվայլեր ինծի ճա-  
խորդութեան մէջ անանկ յուսահատու-  
բար արտմիլ, հոգալ, տրտունջ ընել՝ Աս-  
տուած երեսէ ձգեր է զիս ըսելով . հապա  
աւելի զօրանալով քրիստոնէական յոյսին  
մէջ, յանձնուիլ աստուածային իմաստուն  
կարգաւորութեանը՝ որ միշտ աւելի բարին  
կը զիտէ ու կը տնօրինէ, զիտնալով որ  
ան խրկած խաչերը իր սիրոյն մէյմէկ ցոյցն  
են ինծի՝ որոնցմով կուզէ զիս իր որդւոյն  
նմանցընել, առաքինութեանց մէջ կրթել

առաջ տանիլ , յաւիտենական կենաց մէջ  
արժանաւորութիւններուս զանձը զիղկի ,  
արքայութեան մէջ փառաւոր պսակներ  
պատրաստել , որոնց համար պէտք էր որ  
աւելի սիրէի ու միշտ օրհնէի զանիկայ :

## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Թ .

« Ընդ իս ո՛չ խօսիս » .

ՅՈՎ.Է. ԺԹ. 10 :

Թող լուեն զրքերը , փիլիսոփաները ,  
կիրքերը . դու միայն , ով տէր իմ , խօսք մը  
խօսէ ու անիկայ բաւական է ինձի . անոնք  
չեն համոզեր , հապա աւելի կը շփոթեն ,  
չեն հանդարտեր , հապա եւելօք կը խռո-  
վեն , չեն մխիթարեր , հապա աւելի կը  
տրամեցընեն . բայց քու խօսքդ անուշու-  
թիւն , մխիթարութիւն ու խաղաղութիւն  
է , որովհետեւ մէկ հատիկ ճշմարտութիւն ,  
արդարութիւն , սրբութիւն ես . ուստի դու  
միայն խօսէ , որ կը լեցընես , զո՛հ կընես ,  
կը խաղաղացընես , կը մխիթարես . բայց  
դու հիմա չես խօսիր ինձի հետ . « Ընդ իս  
ո՛չ խօսիս » : Տէր իմ , քու ձայնդ բուխսիրտ  
հօր մը ձայն է , քու երգդ նախանձաւոր  
սիրալիր փեսայի մը երգ է . դուն երբոր



կը խօսիս, եղբօր պէս անուշութիւն սէր  
 կը խօսիս, բարեկամի պէս բարութիւն,  
 խաղաղութիւն մխիթարութիւն կը խօսիս.  
 Բայց դու չես խօսիր ինծի հետ, որ քու  
 որդիդ, եղբայրդ, բարեկամդ եմ. բայց  
 չըլլայ որ վշտացած ըլլաս ինծմէն. թէ որ  
 ասանկ է նէ, գոնէ սրդողած հօր մը պէս  
 յանդիմանութիւն խօսէ անհնազանդ ըս-  
 տահակ որդիիդ. վիրաւորուած փեսայի  
 նման տրտունջ խօսէ անհաւատարիմ հար-  
 սիդ. անարդուած բարեկամի պէս զան-  
 դատ խօսէ անհաստատ բարեկամիդ.  
 միայն թէ չխօսիլ մըներ, ըսէ, մի լռեր,  
 լսեցուր մէյմը անուշ զուարթացուցիչ ըզ-  
 մայլեցուցիչ ան ձայնդ՝ կրքերուս խոռ-  
 վութիւններուս հանդարտիչ. բայց դու  
 չես խօսիր. « Ընդ իս ո՛չ խօսիս » : Բայց  
 տէր իմ, աս ալ ըսեմ. թէ որ հայրական  
 բարեկամական ձայնիդ ես արժանի չեմ  
 նէ, գոնէ խօսէ բարկացած սրդողած դա-  
 տաւորի մը բերնով, յանցանքս երեսս դար-  
 նելով, անդդամութիւններս չեխելով, պա-  
 տիժ սպառնալով. ասիկայ ալ յանձս կառ-  
 նեմ, ասոր ալ գոհ կըլլամ, վասն զի աս-  
 կից ալ սիրելի կիմանամ: Բայց դու դեռ  
 ահա կը լռես, ձայն մը չես հաներ, խօսք  
 մը չես գուրցեր, չես ուղեր ըսել, չես խօ-  
 սիր ինծի հետ: Ո՛հ ասանկ լռութիւն մը  
 ցանցառ տեսնուած քու վրագ՝ որչափ կը

վախցրնէ զիս , ինչչափ ներսի զիս վեր  
 վար կընէ կը վրդովէ , որպիսի նեղ մըտ-  
 մտութներու մէջը կառնէ կը ձգէ զիս .  
 վասն զի զիտեմ որ երկան համբերու-  
 թեամբ լռութիւն մը՝ ետքի կատաղու-  
 թեան , վերջին գոռում գոչումի , չզիմա-  
 նալու վայնասունի մը տուն կու տայ կը  
 վերջանայ , ո՞վ կրնայ ան ատեն անոր զի-  
 մանալ : Ասան զի , ով Աստուած իմ , դուն  
 երբեմն կը պատժես հօր պէս , երբոր ու-  
 զորմութենովդ կը պատժես մեղաւորը , ու  
 պատժելովդ միանգամայն կը սիրես զանի-  
 կայ . երբեմն կը պատժես դատաւորի պէս ,  
 երբոր կը պատժես յանցաւորը՝ իր յան-  
 ցանքներուն համար վճարելու աստուա-  
 ծային արդարութեանը . ասոնք ճշմարիտը  
 քսելով պատիժ չեն , հապա մանաւանդ թէ  
 հայրական խրատ մը՝ որով ստահակ որ-  
 զիդ ճամբայ բերել կուզես : Բայց ինչ ք-  
 սեմ որ պահ մըն ալ թշնամիի պէս կը պատ-  
 ժես , երբոր մեղաւորին վրայ տրամադրու-  
 թիւն մը չտեսնալով՝ արդար տեղ չնորհ-  
 քիդ լոյսէն կը զրկես , բոլորովին մթուն  
 մէջը կը թողուս նոյն հողին , այնպիսի  
 մտքի կուրութենով ու սրաի յամառու-  
 թենով կառնես կը կապես կը բռնես ա-  
 նոր աչքի տեսութիւնը՝ որ մէյմըն ալ չկըր-  
 նար տեսնալ , որովհետե իր տնսնալուն  
 մէջ կոյր , ու իր լսելուն մէջը խուլ է . ա-

հա ասիկայ իրաւցընէ թշնամիի հարուած մըն է որ կուտաս անոր, որովհետեւ մեզքին վրէժխնդրութեանը հետ մեղաւորն ալ փճացընել է . ինչ զարհուրելի, սուկալի, վերջին պատիժ : Բայց ով տէր, ահա ես ճշմարտապէս մեղաւոր որդի մը դիմացդ, ուրիշ ամէն տեսակ պատիժներուն յօժարակամ ներքե կը դնեմ՝ դիս, ամէնը կընդունիմ, յանձս կառնեմ, մանաւանդ որ կը համբուրեմ՝ ես ան ձեռքիդ դաւաղանը՝ որուն շարժողը սիրուն սիրտդ է, ան վերէն ինձի խրկած դաւաթիդ սիրով ձեռքս կերկնցընեմ առնելու, ու բերնիս չմօտեցուցած՝ առաջ ճակատիս կը դնեմ, աս կերպ պատրաստ սիրտ մը տրամադրեր եմ ուրիշ ամէն ցեղ պատիժներուն, մինակ որ չըլլայ թէ աս տեսակ լռութենով մը պատժես դիս, ուրիշ պատիժներուդ ամէնը իրաւցընէ մէյմէկ չընորհք մը կը համբեմ ինձի, որովհետեւ ասանկ պատիժէ մը կը պահեն կազատեն դիս . անոր համար խօսէ, ով տէր իմ, ինձի հետ, բարկութենով սրդողելով, յանդիմանելով, տրտունջով ու սպառնալիքով, միայն թէ մի լուեր :

« Ընդ իս ո՛չ խօսիս » . ինձի հետ չես խօսիր կըսեմ, բայց միթէ իրաւցընէ չես խօսիր . դու ահա կը խօսիս, բայց ես չեմ լսեր, ինչու որ՝ նուրբ բարակ կամացուկ

կը խօսիս ներքին սրտէ 'ի սիրտ կը խօսիս . դու կը խօսիս , բայց ես չեմ ըմբռներ բան մը , ինչու որ՝ մինակութեան , առանձնութեան , հանդարտութեան , խաղաղութեան մէջ կը խօսիս . ես աշխրքիս բաղմութեան , կիրքերուս խռովութեան , ունայնութիւններուն խառնադոչումին մէջ կը լսեմ քեզի . դուն ներսը կը խօսիս , ես դուրսը մարմնոյս անկաճ կը դնեմ . դու կը խօսիս սրտիս մէջ , բայց հոն տեղ չատ խօսողներ ըլլալով չեմ հասկընար քուկին հեղիկ , փափուկ խօսուածներդ . կիրքերուս ձայնը աշխրքիս գոռում գոչումին հետ մէկ եղած՝ քուկին կամացուկ հանդարտիկ ձայնդ կը գոցեն կը խըղդեն , չեն լսեցըներ ինծի : Գուն կը խօսիս , բայց որպիսի դրցուածներ են , ինչ լեզուներով ըսուածներ են անոնք . երբեմն կը խօսիս Պեսային բերնովը , երգերգոցին խորհրդաւոր պարտէզը ինձած՝ անուշ անուշ լեզուներ ծաղիկներով կը թափես առակաւոր Հարսիդ ետեէն , բայց բուրաստանին դռները բաց ըլլալուն չես լսեցըներ . երբեմն կը խօսիս Մովսէսին ձայնովը խստասիրտ Փարաւոնին երեսէն վեր պոռալով , պատիժով սպառնալիքով , լեզի անուշ կը խօսիս , բայց անոր սիրտը յամառ կարծր ըլլալով անկաճին չես կրնար լսեցընել տալ . պահ մը նաւապետին պէս

Յովնանին անկաճէն վար խրատով յորդո-  
 ւանքով անուշութեամբ կը խօսիս, բայց  
 անիկայ մէկ տեսակ թմրութեան ապշու-  
 թեան ու անհոգութեան մէջ դանալով  
 չես կրնար լսեցընել: Ահա ինծի հետ ալ  
 դուցէ շատ անգամ ասանկ խօսիլներ ը-  
 րեր ես, բայց իմ ասանկ հոգևորին սլաղ  
 դաղջ, անհոգ ըլլալուս պատճառաւ չես  
 կրցեր լսեցընել. անոր համար անիրաւ տեղ  
 ու առանց պատճառի դանդատ կրնեմ քեզ  
 մէ այսօր, իբր թէ քուկդ ըլլայ յանցան-  
 քը՝ որ քուկին երկնաւոր կոչմունքներովդ  
 շնորհաց այցելութիւններովդ չես խօսիր  
 ինծի, գրգելով խղճմտանքս, յորդորելով  
 շարժելով սիրտս ու միտքս համոզելով:

Բայց ահա այսօր աշխարքէս դուրս ե-  
 լած մը, բնութեան ձայնը դադրեցուցած,  
 կիրքերուս խռովութիւնները ինջեցուցած,  
 սիրտս հանդարտեցուցած, կու գամ, ով  
 տէր, քեզի լսելու, ինչպէս Մաղդաղենա-  
 ցի մը սիրալիր սրտով աչքիս արցունքով  
 ոտքդ նստած պլլուած, կը լսեմ քեզի.  
 Ինչպէս սիրուն աչկերտ մը Յովհաննէսը,  
 սրտի մաքրութեամբ ու մտքի լուսաւորու-  
 թեամբ գլուխս ծունկիդ դրած, կուրծքիդ  
 վրայ կռթընցուցած, սրտիդ մօտիկ գալով,  
 կը լսեմ քեզի. Սամուէլ մարգարէին պէս  
 արթուն դուարթուն գիշերային խաղաղու-  
 թեան ատեն ներսի գրսի առանձնութե-

նով, անկաճա ու անկաճիս հետ սիրտս  
միտքս քեզի տուած, կըսեմ, խօսէ դուր-  
ցէ, ով տէր իմ, որ քու ծառայ լսէ. « Խօ-  
սեաց տէր, զի լուիցէ ծառայ քո » :

ՔԱՂԵԼԻՔ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ահա աս եղանակ շարժիչ խորհրդածու-  
թիւններ՝ շատ կերպով միտքս կարթըն-  
ցընեն :

Նախ և առաջ կիմացընեն, որ ինչպէս  
պէտք է շնորհքը յարգել. աս է, մենձ  
պատիժ համարիլ անոր կորուստը, ամենէն  
մենձ ցարը սեպել անկէ գրկուիլը, անոր  
նորէն դառնալուն ինձի յօժար սրտանց  
ունեցածս տալ, ամենէն անցնիլ. ամէն  
խնդիրքներէն առաջ ու գրեթէ ամենուն  
մէջ անիկայ ժտել Աստուծամէ, ինչպէս մի  
միայն հարկաւոր ու պիտուական հոգի  
փրկութեանս :

Երկրորդ կիմացընեն ինձի, որ ընտոր  
զգուշութեամբ ու մտադրութեամբ պէտք  
է շնորհաց հաւատարիմ ըլլալ, ինչպէս  
երկիւղածութենով համաձայնիլ անոր,  
ինչպէս եռացքով նախանձաւորութենով  
գործել անոր հետ. որ չըլլայ թէ անոր ներ-  
քին ազդեցութիւններուն խուլ ըլլալով  
կամ անհոգութենով ծուլութենով երեսի  
վրայ ձգելով, զեախնը թաղելով, սրղող-

ցընեմ, լուեցընեմ, ետ ընեմ ինծմէն, մէյմըն ալ արժանի չըլլալով այնպիսի մենծ, սուղ, երկնաւոր պարզեի մը :

Երբորդ կը սորվցընեն, որ ինչ եղանակ պատրաստութենով տրամադրելու եմ դիւ շնորհքը ընդունելու. պէտք է որ մեղքէն ու աշխարհէն պարպած սիրտ մը ունենամ շնորհքին, որ շնորհքը բնակելու տեղ դտնայ. առանձնութիւնը, լուծութիւնը սիրեմ, որովհետեւ Աստուած այնպիսի սրտի մէջ միայն կը խօսի, ու շնորհաց հոսանքը կինջեցընէ. պէտք է որ երբոր շնորհքին դալը կուշանայ, հոգևոր ցամաքութեան չորութեան մը մէջ ձգելով դիւ, կամ կիրքերու քունութեան տակը ճմլելով ճնշուելովս, աղաչեմ Աստուծոյ՝ շնորհքը շնորհողին, որ իր աս աստուածային ճրի պարզեր փութով խրկէ ինծի երկնքէն:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ժ.

« Տէր երե ընդ յարկաւ խնով մտանիցես » .

ՂՈՒԿ . Է . 7 :

Ով տէր, բաւական չեղաւ մի որ երկինքը փառաց աթոռդ թող տալով, ինծի համար մարդեղութեան խորհուրդին մէջ ե-

կար ինչար աշխարհքը, տառապանաց տեղը, անմաաչելի անբովանդակելի աստուածութիւնդ մարդկութեան մօտեցընելով ու անոր հետ խառնած միաւորելով ինծի նմանակից, մարմնակից ու եղբայրակից եղար. հերիք չեղաւ մի որ խմին փրկութեանս համար խաչին վրայ բոլոր արունդ թափելով քամելով, նոր գերեզմանի մը մէջ մեռար թաղեցար հասարակ մարդու մը պէս, կուզես հիմա ալ մէկ խելքէ չանցած սիրոյդ գիւտովը մէկ շատ ըսքանչելիքներու ձեռքով ամենասուրբ հազորդութեան խորհուրդին մէջ, հացին ու գինիին ցածուն տեսակին տակը խոնարհած, աստուածութեամբ ու մարդկութեամբ միանդամայն խմին ներսս մեղաւոր սրտիս գալ իջնալ, ու հոն բնակելովդ ինծի հետ մէկ սրտով մէկ հոգւով միանալ. «Նթէ ընդ յարկաւ խմով մտանիցես»: Ի՛նչ սքանչելի խոնարհութիւն, որպիսի նորադիւտ սէր: Իրաւցընէ ասանկ մէկ գերանգանց անդիւտ շնորհքի պարզելի մը ո՞վ կրնար հաւատալ, թէ որ հաւատքը չեր ըսեր նէ: Բայց հաւատքը ըսելէն ետե, ո՞վ կրնայ իր դարմանքը զսպել քու սիրոյդ փափկութեանը, ազնուութեանը, աստաձեռնութեանը վրայով, ու իր փոխարէն սէր, երախտադիտութիւնը, շնորհակալութիւնը դլանալ ասանկ մենծ, անհուն



պարզեի ու երախտիքի մը դիմացը : Տէր  
 դուն ինձի կու գաս . չէ թէ սանկ հեռուէն  
 մը բոցերուն մէջ կը տեսնուիս ինձի , ինչ-  
 պէս անգամ մը Մովսէսին , կանչելով մի  
 մօտենար ինձի , չէ նէ կը մեռնիս . չէ թէ  
 քու լուսոյդ ծովէն պղտիկ կաթիլ կայծ  
 մը կը ցուցընես ինձի , ինչպէս ատեն մը  
 մարդարէին , ըսելով որ երեսս տեսնողը  
 չկրնար ապրիլ . չեմ ըսեր որ մինակ տա-  
 նըս մօտենալով միայն , ինչպէս անգամ  
 մը հարիւրապետին՝ անոր հիւանդ մանու-  
 կը ըսընացընելու , կամ դրսէն հաղուս-  
 տիդ քսուելովը միայն ինձի , ընտոր որ օր  
 մը տեռատես կնկանը , ներսէդ գօրութիւն  
 մը մէկէն դուրս հանած՝ անոր ծածուկ  
 ներքին հին ախար շարժելու փարատելու  
 բաւական , հապա կըսեմ՝ դուն ինձի կու  
 գաս , այսինքն իմին ներսս , սրտիս վրայ  
 անմիջապէս կու գաս կիջնաս , կը մտնաս  
 կը բնակիս՝ անիկայ քեզի տուն տաճար  
 բնակարան կընես . « Աթէ ընդ յարկաւ ի-  
 մով մտանիցես » : Քնչ բան է ասիկայ , ով  
 տէր իմ . դուն որ անխմանալի , անբովան-  
 դակելի , անմատչելի բնութիւն , աստուա-  
 ծութիւն , լոյս մըն ես , գորն որ երկինք տա-  
 նելու չբաւեր , որ ընդունելու հրեշտակայ-  
 ին բնութիւն մը բաւական չըլլար , ու ճա-  
 շակելու համար սրովբէական մաքրութիւն  
 մը քիչ կու գայ , որովհետե նոյն իսկ հրե-

դէն գուտ մաքուր երկինք , արդարութեան լուսասփիռ պայծառ արև , ու փառաւոր արքայութիւն մըն ես , հիմա ինծի կու գաս , կիջնաս կը ցածնաս կը խոնարհիս , որ չընչին որդ մըն եմ գետնի , ափ մը անարգ հող փոշի , որ մեղաւոր ախտաւոր հոգի մըն եմ դիմացդ , ամէն կերպ անկատարութիւններով , սպախութիւններով , տկարութիւններով , ու բիւր բիւրոց մեղքով լիք , մանաւանդ որ նոյն իսկ ունայնութիւն , խեղճութիւն մը . ասիկայ ըլլալու բան է մի , որին խելքը կրնայ հասնիլ , միթէ Աստուծոյ վեհափառութիւնը՝ ցածութեան մը հետ , անհուն կարողութիւն մը՝ տկարութեան հետ , անմատչելի լոյս մը՝ մթուն հետ քովէ քով գայ , մէկ տեղ ըլլայ , մէկ տան մէջ բնակած կենայ . « Աթէ ընդ յարկաւ իմով մտանիցես » :

Տէր ահա դուն ինծի կու գաս , ու կուգաս բոլոր զանձերովդ , լոյսերով , հարատութիւններով ու սարգևներովդ , որպէս զի ամէն կողմէն լեցընես լիացընես զիս , ծածկես իմին մերկութիւնս խեղճութիւնս , անօթութիւնս կշտացընես , ծարաւս մարես , ու մեռած հոգւոյս նոր կեանք մը տաս : Բայց ընտոր կըլլայ , վասն զի դուն ահա կու գաս շնորհաց կեանք տալու ինծի , ես գուցէ մահացու մեղքին մէջ մեռած եմ . դուն կու գաս միաւորուելու ինծի հետ , ես

արդէն ստեղծուածներուն հետ միաւոր-  
 ւած եմ. դուն կու դաս քեզի կենդանի ը-  
 նելու զիս, ես ինձի համար կենդանի եմ:  
 Ուստի քուկին մենծութիւնդ, իմին պատի-  
 կութիւնս, քուկին բարձրութիւնդ, իմին  
 ցածութիւնս, քուկին սրբութիւնդ ու իմին  
 անմաքրութիւնս՝ կը ստիպեն կը պարտա-  
 ւորեն զիս, որ չմտեցած չեկած չհասած  
 ինձի, մեկէն ցատքեմ զիմացդ ելլամ,  
 ճամբադ կտրեմ, արգելք ըլլամ գալուդ,  
 ու հարիւրապետին պէս կենդանի հաւատ-  
 քըս շարժելով ճշմարիտ ստեղծող Աս-  
 տուածս ըլլալուդ, անկեղծ խոնարհու-  
 թիւնս ձեռք առնելով յետին անարդ ըս-  
 տեղծուած մը ըլլալուս, երեսս գետինը  
 կորած ծոած առջիդ՝ ըսեմ քեզի, տէր բա-  
 ւական հերիք է ասչափը, ալ առաջ մի  
 երթար, քեզի պէս երկնի ու երկրի ստեղ-  
 ծող փառաց թագաւոր մը ինչ բան ունի  
 իմ տունս՝ իմ յարկիս մէջ իմին տանիքիս  
 ներքեր. ահա ինձի համար մէկ քիչ շար-  
 ժիլդ, քայլ մը առնելդ դէպ ՚ի տունս մենձ  
 բան է, բաւական աշխատանք է քեզի ու  
 ինձի մենձ շնորհք մը. ուստի կեցիր հոս  
 տեղը, ալ առաջ մի երթար, մի աշխա-  
 տիր, ինչու որ՝ զիտեմ իմին ինչ մեղաւոր  
 անարժան ոչինչ մարդ ըլլալս. ու զիտցայ  
 քուկին ինչ մենձ, ինչ սուրբ, ընտոր զօ-  
 րութիւններու սքանչելիքներու տէր մը

Աստուած մը ըլլալդ . « Տէր՝ մի ինչ աշխատ լինիր , զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ խնով մտանիցես » : Արամ թէ Պետրոս առաքեալին պէս քեզ տեսնալուս ճանչնալուս , որ ան տէրն ես՝ որուն ճայնը մրրիկները կը դադարեցընէ , ձեռքերը ալիքները կը հնազանդեցընէ , ու ոտքերը ծովերը կը նստեցընէ կը խոնարհեցընէ , ու չոր ցամաք դեաին մը կը դարձցընէ , մէկէն փռուելով առջիկ , ոտքիդ փարելով , ծունկիդ պլլուած , ըսեմ՝ քեզի՛ ինչ կընես տէր իմ , ասիկայ ըլլալու բան է մի . զնա ինծմէ , ես մեղաւոր մարդ մըն եմ , ինչ բան ունիս իմ քովս , ով եմ ես ե ով դու . դուն ինծի կուգաս , ես ինչպէս կընամ քեզի տանիլ , ասիկայ ըլլալու բան է մի . « Ի բաց զնա յինէն տէր , զի այր մեղաւոր եմ ես » :

Ահա թէ պէտ է ասիկայ ասանկ , բայց միւս կողմանէ միտքս բերելով քուկին սիրոյդ սաստկութիւնը ու ան զարմանալի խոնարհութիւնը՝ որով յօծար սրտանց յանձդ կառնես կընդունիս անարդութիւնը ցածութիւնը ինծի զալուդ , մէկ շատ սառափիկ հրամանդ ու սիրով հրաւերդ՝ աստուածային աս սուրբ սեղանէն ճաշակելու , քենէ մաս բաժին չունենալու սպասնալիքով մը վախացընելով , կը ստիպեն զիս աստուածային մարմնոյդ ու անդին արու-

նից մօտենալու, ան աստուածամարմինս  
 պատառը բերանս առնելու, ու ասոնց  
 հետ միանգամայն իմին վերջին կարօտու-  
 թիւնս, որ իմին մէկ հատիկ կեանքս ըլ-  
 լալովդ, առանց քեզի ծարաւի սոված կը  
 մեռնիմ, կը պարտաւորենն դիս այսօր ա-  
 հիւ եղողութեամբ ու կտքի աստիճան խո-  
 նարհութեամբ բանալ քու զալուստիդ սըր-  
 տիս դուռը, հարկինքով առնել ներսս հը-  
 րամցընել, ու հաւատքով յուսով սիրովս  
 մօտ գալով քեզի դիմադէմ բերան ՚ի բե-  
 րան խօսք տալ խօսք առնել, լսել քեզմէ  
 ու ըսել քեզի, խնդրել ու ընդունիլ խըն-  
 դիրքս, ամէն իժիր եռացքով ու փափա-  
 քով մօտենալով քեզի ինչպէս ծարաւի մը  
 շնորհաց աղբիւրիդ, ինչպէս անօթի մը  
 երկնաւոր հացիդ, ընտոր որ մերկ աղքատ  
 մը աստուածային գանձիդ, ինչպէս հի-  
 ւանդ մը հողոց բժշկիդ, վասն դի դու ա-  
 մենասուրբ հաղորդութեան մէջ իմին հո-  
 գևոր կերակուրս ու ըմպելիքս, ճարտար  
 բժիշկս ու դեղս, մէկ հատիկ առաջնորդս  
 ու վերջին թռչակս, փրկիչս ու փրկանքիս  
 զինը, Աստուածս ու ամենայն ինչս ես:

Անոր համար թէպէտ և իմին անարժա-  
 նութիւնս ետ ետ կընէ չհամարձակեցըներ  
 դիս քեզի մօտենալու, սիրտս ընդունելու,  
 բայց դիտնալով որ դուն ինձի ստէպ գա-  
 լովդ, շնորհքներուդ ու չարչարանացդ ար-

դիւնքներուն արժանիքովը կրնաս քիչ մը տրամադրել պատրաստել զիս քուկին ընդունելութեանդ, ու ինչպէս մէկ խորան ու տաճար մը պատրաստած սիրտս քեզի՛ հոն բնակութիւնդ դնես, ու հեղ խոնարհ ընելով զանիկայ՝ խաղաղութեամբ ու սիրով վայելես հոն, ահա աս կերպ մտքերով մօտեցած այսօր՝ կառնեմ ան աստուածային մարմինդ անարժան բերանս, ինչպէս որ անկից ալ կը փափաքիմ սիրտըս ընդունելու. որպէս զի դուն իմին մէջս բնակիս ու ես քու մէջդ. դուն ինձի հետ միաւորուիս, ես քու հետդ. դուն իմին մէջս կենդանի ըլլաս, ես քեզմով. դուն ինչպէս աշխրբիս մեղքովը բեռնաւորուած անմեղ սուրբ դառն Սատուծոյ մը ամէն օր ինձի համար Սատուծոյ սեղանին վրայ զոհի կացութեան մէջ, ու ես խոնարհ ու զղջացեալ սրտով մը քու արդարութեանդ սեղանը զոհ ըլլալու պատրաստած զիս ՚ի հաշտութիւն ՚ի հաճոյս երեսացդ, և ՚ի հօտանուշից աստուածութեանդ:

ԲԱՂԵԼԻԲ ՊԱՐՏԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ահա ասանկ փափուկ խորհրդածութիւնները զանազան տեսակ մտածմունքներ կարթնցընեն սրտիս մէջ:

Նախ և առաջ կիմացընեն ինձի՛ որ ինչ-

պէս խորին խոնարհութեամբ ու սուրբ երկիւղածութեամբ մը պէտք է ինծի մօտենալ ամենասուրբ հաղորդութեան, մտածելով թէ ո՞վ է որ ինծի կու գայ, Աստուած մը. որին կու գայ, ինծի պէս մեղաւորի մը. ինչո՞ւ կու գայ, ինծի հետ միաւորուելու. այնպիսի Աստուած մը ընտո՞ր պատրաստութեամբ մեծարանքով պէտք է ինծի ընդունիլ ներս առնել, ինչպէս սիրտս անոր արժանի բնակարան պատրաստել, ընտո՞ր կենցաղավարիլ հետը:

Երկրորդ կիմացընեն՝ որ ինչ եղանակ մաքրութիւն խղճի պէտք է ինծի ունենալ, առաջուց ապաշխարութեան խորհրդով ու կատարեալ զղջման արցունքով տրամադրելով զիս արժանապէս մօտենալու, որպէս զի չըլլայ որ ան աստուածային հացը ու ան սուրբ բաժակը յաւիտենական դատապարտութիւն ինծի ուտելով ու ըմպելով, Քրիստոսին աս սուրբ խորհուրդը սահմանելուն մէջ ունեցած դիտմունքներուն արդելք դրած ըլլամ:

Երրորդ կը սորվցընեն ինծի՝ որ որպիսի կենդանի հաւատքով, մենձ յուսով ու վառուն սիրով պէտք է մօտենալ Յիսուսին. հաւտալով իր աստուածային ամենակարողութեանը՝ որով կարող է օգնել ամէն տկարութիւններուս, յուսալով իրեն անհուն բարութեանը՝ որ պատրաստ է կա-

բօտութիւններու մէջ նայելու հոգալու  
 զիս . ու սիրելով զինքը անկեղծ ու կատա-  
 րեալ պատիճան սիրով մը , ամէն անգամ  
 սիրոյ զոհ ընելով զիս աս կենդանի ու կեն-  
 դանարար՝ բայց ամէն իժիր մեռնելու ոգատ-  
 րատու զոհի կացութեան մէջ սիրոյ խոր-  
 հուրդին :

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԺԱ .

« Վասն իմ մարմնով խաչեալ մեռանի Աս-  
 տուած անմահ » .

ՇԱՐՅԿՅԵ

Ի՞նչ խելքէ մտքէ վեր ըսել մըն է ասի-  
 կայ , Աստուած և մարդ ինծի համար մե-  
 ռած խաչին վրայ . ասիկայ ո՞ր միտք կըր-  
 նայ խմանալ , ո՞ր խելք չափել , ո՞ր սիրտը  
 աս զիւտս զտնալ , ու որպիսի սէր աս  
 զործքը զլուխ հանել . իրաւցընէ ուրիշ մը  
 չէ , բայց եթէ Քրիստոսի պէս անձ մը մի-  
 նակ , անոր պէս ամենակարող ամենա-  
 խոնարհ ամենազուժ Աստուած և մարդ  
 մը , անոր պէս մարդիկները սիրող , ու  
 մարդիկներուն համար զինքը նուաստա-  
 ցընող , հեղ ու խոնարհ սըտով մարդացեալ  
 Աստուած մը . « Վասն իմ մարմնով խա-



չեալ մեռանի Աստուած անմահ » : Ահա  
 աւ խօսքը ամէն պատճառներէն վեր կը  
 շարժէ սիրտս մեղքին ատելութեան վրայ,  
 կը զարմացընէ կը զմայլեցընէ հոգիս միտքս  
 իր բարութեան ու սիրոյն վրայօք : Քրիս-  
 տոս կըսեմ՝ որ իմին ստեղծողս, տէր թա-  
 զաւորս . Քրիստոս՝ որ ճշմարիտ հայրս,  
 հարազատ փեսասս, բարի հովիւս, սիրելի  
 վարդապետս, մէկ հատիկ բարեկամս .  
 Քրիստոս՝ որ Աստուած ու ամենայն ինչս,  
 մեռած ինծի համար խաչին վրայ . ինծի  
 կըսեմ՝ որ իր ձեռքին ստեղծուածն եմ,  
 իր յետին ծառան, իր անարդ գերին . ին-  
 ծի՝ որ մեղաւոր ըլլալովս իր ատելին թըշ-  
 նամին եմ, ափ մը հող, կոյտ մը փոշի,  
 ոչինչ մը . հիմա ասանկ Աստուած մը ին-  
 ծի համար մեռած, ու խաչին վրայ մեռ-  
 նելով՝ բոլոր արուեր, մարմինը, շունչը,  
 կեանքը տուած զոհ ըրած . մեռած կըսեմ .  
 չէ թէ միայն երկինքը փառաց ու երանու-  
 թեան աթոռը թագաւորութիւնը թող տա-  
 լով աշխարհք եկած, ցաւի ու արցունքի  
 արօտը . չէ թէ միայն իր երկրպագելի  
 փառաւորեալ աստուածութիւնը վեհա-  
 փառութիւնը լոյսը ծածկելով մթնցընե-  
 լով, ծառայական կերպին նմանութեանը  
 մտած խոնարհած, մարմինին տկարու-  
 թիւնը, ցածութիւնը, ծանրութիւնը, խեղ-  
 ճութիւնը յանձր առած . չէ թէ միայն մենձ

մենձ ու չափազանց հրաշքներու ուժով իր  
 աստուածութիւնը մարդկութեան հետ  
 միաւորելով՝ ամենասուրբ հաղորդութեան  
 խորհուրդին մէջ հացին ու զինիին երևոյթ-  
 ներուն տակը ծածկուած, ամփոփած սրղ-  
 տիկցած, հանապազօրեայ կերակուր խմե-  
 լի ըլլալով ինձի. չէ թէ միայն իր հանգըս-  
 տութենէն, փառքէն, խնտումէն ետ կե-  
 նալով մէկ քիչ վիշտ, կտոր մը ցաւ, թէ-  
 թե նեղութիւն մը քաշած, քիչ մը քրտինք,  
 պուտ մը արցունք, կաթիլ մը արուն թա-  
 փած, հապա մեռած, բոլոր շունչը, մար-  
 մինը, անդամները տալով, ու տալով ամէ-  
 նը մէկանց, բովանդակ մարդկութիւնը,  
 մարդկային բնութիւնը, իր մահկանացու  
 ըլլալը, զոհ ընելով հատցընելով ոչնչացը-  
 նելով ինձի համար. ահա աս է մեռնիլ,  
 ասանկ կըլլայ մեռնիլ: Մեռած՝ երակնե-  
 րուն մէջը կաթիլ մը արուն ու մարմինին  
 վրայ ողջ տեղ մը թող չտալով, վերէն վար  
 վէրքի արունի մէջ, ցաւով խոցելով. մե-  
 ռած՝ մէկ ետքի աստիճան անարդական,  
 անգութ, տառապելի, խայտառակ մահով  
 մը. սուրբը արգարը մեռած յանցաւորի  
 պէս՝ կախազանէ մը կախած, խաչի մը  
 վրայ դամած՝ անղգամի անօրինի պէս եր-  
 կու արունկզակ աւաղակի մէջ տեղը. դամ-  
 ձեռքը, դամ ոտքին, փշէ պսակ զլուխը,  
 դերիի պէս անտէր, անօգնական, մերկ

խայտառակ, թուքի արունի մէջ առանց  
 ախտակցութեան, առանց մխիթարու-  
 թեան ետքի շունչը տուած լմնցուցած. ա-  
 հա ասանկ մեռած. ի՛նչ սքանչելիքներու  
 սքանչելիք: Թէ որ ծառայ մը իր տիրոջը  
 համար մեռնէր, կամ թէ գերի մը իր թա-  
 գաւորին համար արուն թափէր, թէ որ  
 բարեկամ մը իրեն սիրելի բարեկամին  
 համար կեանքը դնէր, գուցէ ըսեմ՝ այն-  
 չափ մենծ նորելիք ու չլսուած բաներ մը  
 չէին ասոնք. բայց երբոր թագաւորը իր  
 գերիին համար, տէր մը ծառային սիրոյն,  
 բարեկամ մը իր ատելոյն վրայ կը մեռ-  
 նի, ի՛նչ աստիճան խելքէ մտքէ վեր դար-  
 մանքի նիւթ, ապշելու, մատ խածնելու  
 բարութիւն սէր. ու ասկէ աւելի մտածե-  
 լէն զարմանալէն՝ զինքը կորսնցընելու աս-  
 տիճան, խելք թոցընելու բան է ասիկայ.  
 «Վասն իմ մարմնով խաչեալ մեռանի  
 Աստուած անմահ»: Բայց ինչպէս որ տա-  
 րակոյս չկայ, ճշմարիտ է, որովհետեւ հա-  
 ւատքի նիւթ է, որ է ըսել հաւատքս է,  
 ասանկ ալ ամէն իժիր, ամէն տեղ, ամէն  
 մարդիկներուն, ամէն աշխարհքներուն  
 սլառամելու, քարոզելու, երկինքը ու եր-  
 կիրը հիացընելու ապշեցընելու բան մըն  
 է՝ որ իմին Աստուածս ինծի համար մեռած  
 է խաչին վրայ:

Այսպիսի անհուն՝ անչափ սիրող, ան-

սահման ողորմութիւն ընող Աստուծոյ մը  
այսպիսի անհուն պարգևի, անախատելի  
բարութեան գիմացը՝ ինչ ընել չվայլեր հի-  
մա: Միթէ իր աս երախտիբը ճանչնալ,  
գիտնալ, խոստովանիլ մինակ, շնորհա-  
կալ ըլլալ, օրհնել զովել երկնաչափ բար-  
ճրացընել միայն. արդեօք իր սիրոյն հա-  
մար անարդուիլ հալածուիլ չարչարուիլ.  
արգեօք բոլոր կեանքին մէջ կենդանի զո՞հ  
ըլլալ, բիւր կերպ տանջանքներով բիւր  
անգամ. մեռնիլ, միշտ կենդանի ըլլալ՝  
միշտ մեռնելու համար: Քայց ահա թէ որ  
բոլորովին երիւմ հատնիւմ՝ մոխիր ըլլամ,  
չքանամ ոչնչանամ՝ ևս իրեն համար, մենձ  
բան մը ըրած չեմ ըլլար, ինձի պէս չնչին  
յետին ստեղծուած մը, ամենամեծ ստեղ-  
ծողի, ինձի համար մեռնող Աստուծոյ մը  
սիրոյն փոխարէն. ու միշտ կը ստիպուիմ՝  
կը պարտաւորիմ՝ որ չափազանց աստի-  
ճան վար ըլլալով իմին ըրածներս՝ դեռ չա-  
փազանց աստիճան վեր պարտաւորու-  
թիւն մը կը մնայ ինձի՝ հատուցանելու ի-  
րեն աս անփոխադարձելի բարութեանը  
ու պարգևին: « Այսն իմ մարմնով խա-  
չեալ մեռանի Աստուած անմահ »: Քրիս-  
տոս ինձի համար մեռած, որպիսի մենձ  
վստահութեան ու մխիթարութեան պատ-  
ճառ ինձի՝ մեղքերուս համար Աստուծոյ  
ողորմութենէն յոյս չկտրելու. ընտոր

սէր ու յորդորանք ինծի՝ իրեն համար  
 խաչ քաշելու, խաչը գրկելու, խաչին  
 վրայ մեռնելու, փառք ու պարծանք սե-  
 պելով խաչը ինծի. ինչ ազգու օրինակ,  
 բանուկ շարժառիթ մը արիութենով, հա-  
 նապաղորդութենով, համբերութենով ու  
 ուրախութենով ինծի համար խաչեալ մե-  
 ռեալ Յիսուսիս խաչակից մահակից ըլ-  
 լալու :

Ահա այսպիսի ճիշդ խորհրդածութիւն-  
 ներ, սուրբ մտածութիւններ, դարմանա-  
 լի դիւանք ու ասոնցմէ աւելի չհատնելու  
 չցամբելու մշտաբուղիս անհատնում աղ-  
 բիւր մը, ծով մը ամէն տեսակ առաքինու-  
 թեանց կը դռնամ աս մէկ կարճառ օտ ը-  
 սուածքիս մէջը, երբոր ու քանի հեղ որ  
 կըսեմ ու կը մտածեմ ասիկայ. « Այսան-  
 իմ մարմնով խաչեալ մեռանի Աստուած  
 անմահ » :

ԲԱՂԵԼԻՔ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ահա աս եղանակ խորհրդածութիւն-  
 ներէ շատ գեղեցիկ մտածմունքներ քա-  
 ղելու կը շարժի սիրաս :

Նախ և առաջ ինչպէս պէտք է ինծի  
 ասանկ Աստուծոյ մը շնորհակալ ըլլալ,  
 դովիլ մեծացուցանել, ու կենացս ինչուան  
 ետքի շունչը չզաղրիլ զինքք օրհնելէն, որ

ինծի համար մեռնիլը ուզեց ու մեռնիլ  
այսպէս :

Երկրորդ ինտոր կը վայլէ ինծի որ ես  
ալ առանկ Աստուծոյ մը համար աշխրբիս  
վրայ բան քաշեմ, ու ամէն տեսակ նե-  
ղութիւններուն վիշտերուն սիրով ուրա-  
խութեամբ համբերեմ, երբ իմին սիրոյս  
համար յանձը առաւ մեռնիլ ու մեռնիլ աս  
կերպ :

Երրորդ ինչչափ պէտք է ինծի մեղքե-  
րուս համար Աստուծոյ ողորմութենէն  
յոյսս չկտրել, աչքիս դիմացը ունենալով  
Աստուած և մարդ ինծի համար վիրաւո-  
րած մեռած խաչին վրայ . իր վէրքը, ա-  
րունը, մահը ու անոնց հետ իր ամէն ան-  
հուն արդիւնքները արժանիքները անհատ-  
նում դանձ մը շնորհաց, աղբիւր մը լուաց-  
ման, դեղ մը բժշկութեան, ապաստան մը  
ողորմութեան թող տուած իմ ձեռքս ա-  
մէն կարօտութիւններուս տկարութիւննե-  
րուս մէջ, փորձութեանց ժամանակը, մեղ-  
քի մէջ իյնալուս :

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ ԺԲ .

« Չընրացսն կատարեցի » .

Բ . ՏԻՄ . Դ . 7 :

Ես ալ ուրիշներուն պէս մարդ մըն էի , եկայ ընկայ աշխարհքը . պզտիկ էի մենծցայ , մանուկ էի ու ծերացայ , կենացս նոր նոր տարիքներուն զանազան կացութիւններուն հետ՝ զանազան ալ քալուածքներու վիճակին մէջը գտնուեցայ , լեռներ ինջայ ելայ՝ վտանգաւոր հասակներուն խել մը դիւրասահ լարծուն վոտսերուն վիհներուն մէջէն . ծովեր անդունդներ կտրեցի անցայ՝ մարմնոյ , աշխարհի , սատանային մէկ շատ վտանգներուն փորձութիւններուն յափշտակիչ պտոյտներէն , մրրիկներէն , ծփանքներէն վեր վար տարուբերելով . դաշտեր ցամաքներ քալեցի՝ որ առաջուրնէ ինծի փուշ ու տատասկ բուսցընելու հրաման առեր էին , ուր պէտք կըլլար ինծի ամէն իժիր ճակտիս քրտինքովը ու աչքիս արցունքովը , լալով ողբով սերմանել ու տրտմութեամբ հնձել : Ահա ասոնց ամենէն ետքը վերջապէս քալուածքներուս վերջը հասայ , մահկանացու կեան-

քիս ասպարիզին նպատակը ձեռք ձգեցի ,  
 կամ թէ բռնածի պէս եղայ . « Չընթացան  
 կատարեցի » : Բայց ահա ասանկ մէկ մենծ  
 ու երկան ճամբորդութեան մը մէջ , որ  
 ծնած օրէս սկսեր էր ու ինչուան մահիս  
 գերեզմանը կը շարունակէ , օր մը չտե-  
 սայ չլսեցի որ խաղաղութիւն է , հապա  
 միշտ պատերազմ ծեծ կախ . աչքս բացի  
 ծեծի մէջ ու կը գոցեմ ծեծով . իրաւցընէ  
 օր մը , թէ որ ճշմարիտը քսեմ , մէկ շիտկէ  
 շիտակ գլուխ վերցուցած , մխիթարուած  
 հանդարտ ուրախ սրտով , հողոյ փրկու-  
 թեանս վրայ ասպահովութենով մը երկըն-  
 քի երես չտեսայ , հապա միշտ ամէն օր  
 ամէն ժամ մահիս երկու տեսակ անորոշ  
 անտարբեր , իրարու դիմադէմ ներհակ  
 յախտենականութիւններուն , դժոխքին  
 արքայութեան կը քսեմ , զարհուրելի դող-  
 դրդալու մտամտութիւնով սիրամաշտութիւնով , իբր  
 թէ երկու կորած ծռած , գլուխս գետին ,  
 աչքս հողին , վերջիս սպասելով հալեցայ  
 մաշեցայ , որ արդեօք ո՛ր , երբ ու ինչպէս  
 պիտոր ըլլայ : Ասանկով գրեթէ բոլոր  
 կեանքս ախի դողի մէջ անցուցի ու կան-  
 ցընեմ , ինչու որ՝ քալուածքիս բուն ետքի  
 նպատակին հասնիմ , աս թախտական  
 բարբարական ճամբորդութեանս վերջը  
 դայ հասնի ինծի . ինչուան որ մահը ան-  
 ցաւորին յախտենական կեանքին փտան .



գաւոր կամուրջ մը ըլլալով ինծի՝ վերջին  
ճակատադիրս սահմանէ, որ ատեն ըսեն  
ինծի, ալ խաղաղութիւն է, զնա հանգիր  
աշխատած հողի, որով աշխարհիս ամէն  
բանը լիննան ինծի համար. ընտոր որ աշ-  
խատանքը, անանկ ալ հանգստութիւնը,  
ինչպէս որ ուրախութիւնը, անանկ ալ  
տրտմութիւնը, ընտոր որ փառքը, նոյն-  
պէս ալ անարգանքը:

« Զընթացսն կատարեցի »: Բայց ինչ-  
պէս սկսայ, ընտոր առաջ քալեցի, ինչ-  
պէս ու որ կը վերջացընեմ. աս է, ընտոր  
ապրեցայ, կամ ընտոր որ պէտք է նէ  
ճշմարտապէս ասպրեցայ մի, վասն զի Աս-  
տուծոյ համար չապրիլը՝ ապրիլ չըսուիլը,  
աշխատիլ է՝ բայց վաստըկիլ չէ, ցանել  
է՝ բայց հնձել չէ, քալել է՝ բայց հասնիլ  
չէ, ծեծկուիլ է՝ բայց պսակը առնել չէ:  
Արդեօք կրնամ մի ըսել, որ տաշափ կեան-  
քիս մէջ մինակ օր մը, չըսեմ ժամ մը, բո-  
լորովին Աստուծոյ համար անցուցի, այն-  
չափ ըրած գործքերէս մինակ մէկ հա-  
տը, չեմ ըսեր շատը, ամբողջապէս Աս-  
տուծոյ համար, անոր դուռ փառքին սգա-  
տոյն համար ըրի, տարակուսելու բան:  
Ափսոս, մեզք ուրեմն աշխատանքիս, ո-  
րովհետեւ ըրածներէս որն որ Աստուծոյ  
համար չեղան, կորսուած են ու կորսուա-  
ծի չեղածի պէս մը կը սեպուին: Անցած

տարիններուն մէյմը աչքս դարձցընեմ ,  
 տեսնալու նայելու թէ ընտոր անցան ,  
 կամ թէ ընտոր որ պէտք էր նէ անցան  
 մի . մեղքերէն ու մեղքի առիթներէն ետ  
 կեցայ , բաւական զգուշութիւն ըրի , շը-  
 նորհքներուն հաւատարիմ պահպանու-  
 թիւն ցցուցի . վիճակիս , կոչումիս , հա-  
 սակիս , պաշտօնիս պարտաւորութիւննե-  
 ըր ձեռքէս եկածին չափ 'ի դործ զրի . բա-  
 րեպաշտական դործքերուն ու ապաշխա-  
 րութեան կրթութիւններուն ինչչափ կը  
 պահանջէր նէ , ետեէն եղայ . կիրքերուս  
 մոլութիւններուս ամէնը , կամ թէ դոնէ  
 մէկ հատը ըսեմ , ուղղեցի կրթեցի . առա-  
 քինութիւններուն վաստակին մէջ ար-  
 դեօք չափաւոր շահ մը կրցայ ընել . անոնց-  
 մէ մէկ անդին մարդարիտ մը ձեռքս ան-  
 ցուցի . Աստուծոյ ճշմարտապէս եռացքով  
 ծառայութիւն ըրի . զինքը ինչչափ որ պար-  
 տաւոր էի սիրեցի պատուեցի . համբերու-  
 թեամբ աստուածային կամացը համաձայ-  
 նութեամբ խաչերս տարի . հոգի փրկու-  
 թեանս վաստակին ինչչափ որ կը պա-  
 հանջուէր , մտադրութենով դատեցայ . եր-  
 կընքին համար արդեօք որչափ դանձեր  
 կրցայ ժողվել . թէ հիմա մեռնելու ըլ-  
 լայի , ինչ կըսէի , ինչ կընէի : Ահա՛ թէ  
 որ ասոնցմէ վերջացայ , ետ մնացի , վայ  
 է ինձի ու բիւր վայ , ինչու որ՝ ըսել է թէ

բան մը չըրի կամ չըրածի պէս եղայ, որովհետև կորսնցուցի մէկ հատիկ բուն վերջին վախճանս՝ որուն համար ստեղծուեր էի. ամէն ըրածս դատածս ժողովածքս հովին փոշին խառնեցի տուի. բոլոր զիչերս արուն քրտնեցայ, յոգնեցայ, աշխատանքով հալեցայ մաշեցայ, բայց ատուան լուսուն ձեռքս պարապ ելայ, բացը մնացի, ամօթով ետ դարձայ. ի՛նչ ցուելու կորուստ: «Չընթացան կատարեցի». բայց ընտոր, աշխատութեան չէ նէ դատարկութեան մէջ, նեղութեան չէ նէ հանդրատութեան, ալէկոծութեան չէ նէ հանդարտութեան մէջ, հաւատարիմ կտրիճ զինուորի պէս սուր ձեռքս ծնծի բանակը՝ չէ նէ վատ թուլասիրտ զինուորի նըման հեղգութեան դատարկութեան ձմերանոցը. բուն ճշմարիտ քրիստոնէի, չէ նէ հեթանոսի անհաւատի մը վարքով. արդար ու առաքինի աստուածավախ հողի մը պէս, չէ նէ մեղաւորի անօրէն ամպարչտի պէս: Բայց զիտցած ըլլամ որ ան վայլած խնտումներէս, քչած ուրախութիւններէս այսօրուան օրս ձեռքս բան մը չէ մնացած, ամէնը չեղածի պէս անցեր դացեր է: Բայց ան ըրած համբերութիւններս, Աստուծոյ համար կրած վիշտերս, դատած աշխատանքներս, ամէնը լման անարատ պահուած կեցեր ինծի կը

սպասեն , մէկը չէ մոռցուած . Աստուծոյ  
քովը , օր մը անոնց ամենուն լեցուն փարձ-  
քը վաշխով մէկ տեղ սխտոր առնեմ , ըն-  
դունիմ :

« Չընթացան կատարեցի » . բայց ահա  
ինչպէս Պօղոս առաքեալ մը կրնամ հա-  
մարձակութենով բսել՝ որ ինչուան հիմա  
ամէն պարտաւորութիւններս հաւատար-  
մութեամբ կատարելովս , հիմա կը մնայ  
որ իմին բրածներուս զիմացը արդարու-  
թեան պսակը առնեմ արդար դատաւորիս  
ձեռքէն . վասն զի աս խօսքը անոր պէս  
համարձակ ու վստահութենով դուրցելու  
համար , պէտք է կեանքին ինչուան վեր-  
ջը ետքի շունչը ծեծին բանակը կենալ ,  
սրով թրով արունով մահով խաղալ , բըր-  
տինքի արունի մէջ թապլալիկի , հողին  
փոշին հետ խառնուիլ , անջր ձախը սուր  
շարժել , բանաներուն շղթաներուն տանիլ ,  
ու ինչուան ետքը խաչով ապրիլ խաչին  
վրայ մեռնիլ : Ահա ասանկ ընողը կրնայ  
անոր պէս ալ վստահասիրտ յուսով մը ը-  
սել աս խօսքը Աստուծոյ . ահա ես ինչուան  
աս օրս ամէն պարտքերս որ քեզի ունէի ,  
հատուցի կատարեցի , բան մը չմնաց ,  
մահկանացու կեանքիս քալուածներուն  
նսխատակը ձեռքս բերի , բռնեցի . հապա-  
տակից ետքը ժամանակն է որ իմին դա-  
տաւորէս՝ որուն արդարութեան ատեանը

կեղևամ', իմին կտրճութիւններու համեմատ՝ փառաց ու արքայութեան պսակը առնեմ', զիտնալով որ սուրբ աննախանձ, արդար, հաւատարիմ տէր մըն է, որուն որ աշխատեր եմ', որ իրեն համար ըրածներէս մէկը պարտաւ, անվարձ չհաներ, ճշմարտախօս է, որ բերնէն ելած խոստմունքը զործքով կը կատարէ. առատաձեռն է, որ չափէն աւելի անդին ես կանցնի, կրկինը, չորեքպատիկը, տասնապատիկը, հարիւրապատիկը կը հատուցանէ իրեն սիրելի, հաւատարիմ, եռացկոտ, արդիւնատուր, անաքինի ծառաներուն:

« Զընթացսն կատարեցի » . հոս կատարեցի լմնցուցիի պէս խօսք ընեմ', իբր թէ ընթացքիս վերջը հասայ կամ հասած ըլլայի. վասն զի ան մտքի պատրաստութիւնս նոյն զիտատորութիւններով որոշմունքով Աստուծոյ պատուիրանքներուն ճամբուն մէջ յարատեւելու, ան սրտիս եռացքը արտորանքը համբերութեամբ ու ջանքով ինչուան վերջը առանց թուլնալով առաջ երթալու 'ի կէտ կոչմանս', աւետարանական ասպարիզին ու քրիստոնէական ընթացքին մէջ, աս խօսքը չեղած չկատարած, լմնցածի պէս հիմակուրնէ ըսել կու տայ ինձի, որպէս զի Պօղոս առաքեալին դրուցածին պէս՝ դառ 'ի յետոյսըն մոռացեալ յառաջադէմն նկրտիմ'

ընթանամ 'ի կէտ կոչմանս . ու ան քա-  
 լուածքիս նպատակին զլուխը պատրաս-  
 տուած պսակին պայծառութիւնը հաւատ-  
 քի աչքովս, յոյսիս ականկալութեամբը տե-  
 սած ըլլալով, արդէն ձեռքս առած, զը-  
 լուխս դրածի պէս, յոգնած ոտքերս կըր-  
 կին ուժովցած, աշխատած թեքս նո-  
 րէն զօրութիւն առած, մնացածին առջի-  
 նէն աւելի արտորանքով սաստկութեամբ,  
 իբր թէ երկու թեխն երկու ոտքին վրայ  
 երկուք մըն ալ աւելցուցած, վազեն հաս-  
 նին 'ի զլուխ ասպարէզին, ընթացքիս  
 նպատակին : Աւտի աս ըսելով կիմա-  
 ցընեմ ես ինծի որ դեռ աշխատիլ, վաս-  
 տըկիլ, քալել վազել պէտք է, դեռ մըտ-  
 մտալ, յոգնիլ կը պահանջուի; դեռ քրքա-  
 նիլ ձեռկուիլ կուզէ, դեռ հիմակու հիմա-  
 ցանի ժամանակ է, հնձելու ատենը ետքը  
 կու դայ, դեռ ամառնամէջ է՝ մշակելու ժա-  
 մանակ, աշնանամուտին ստուղէն վայե-  
 լել կըլլայ . դեռ առաքինութեանց աս-  
 պարէզին կէսն է, նպատակին հասնելուն  
 միայն պսակը կառնուի . ուստի ըսել է որ  
 համբերութեան, աշխատութեան, եռաց-  
 քի ժամանակ է . եռացքը, հանապազոր-  
 դութիւնն է՝ որ ամենուն պիտի հասնի,  
 բաւական ըլլայ, կեանքիս անցած ատե-  
 նին մնասը կորուստը ցաւով ու ապաշխա-  
 րութեամբ լեցընելու, ներկային մէջ յա-

րատնութենով համբերութենով արատրաւու, զպլիքներուն մտադրութենով արթնութենով ու արիութենով զինքը պատրաստած, սպասելու. մէկ խօսքով ու ամէնը մէկ խօսքին մէջ սրբութեամբ անցընելու կեանքս ու սրբութեամբ կնքելու :

ՔԱՂԵԼԻՔ ՊԱՐՏԱԻ ՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ահա աս ամէն քաջալերական ու յորդորիչ խորհրդածութիւնները բազմատեսակ որոշմունքներու տէր կընեն զիս :

Նախ և առաջ կիմացընեն՝ որ կեանքիս մէջը ըրած զործքերէս որն որ Աստուծոյ համար չեղան, կորստած սեպելու եմ. անոր համար որպիսի մաքուր ու զուտ զիտաւորութիւն մը պէտք է ինծի ունենալ՝ ասկից ետքը անոնց ամէնը Աստուծոյ համար ընելու, ամենուն մէջը զուտ անոր փառքը պատիւը գիտելով, առանց մէկ մարդկային ակնածութիւն նկատմունք խոթելու կամ ծուռ զիտաւորութիւններ մը ցընելու :

Երկրորդ կիմացընեն՝ որ աշխարհիս ամէն խնտումը փայլքը անցաւոր բաներ են, ինչպէս որ մնունելուս ատեն երևան պիտի ըլլան. անոր համար ինչպէս պէտք է ինծի անոնցմէ ետ կենալ, սիրտ չփակցընել, ու այնպիսի բաներուն ետեէն ըլլալ՝ որ

յաւիտենականին կը ծառայեն , ինչպէս է նեղութիւնը , վշտակրութիւնը , առաքինութիւնները ու բարեգործութիւնները :

Երրորդ կիմացընեն՝ որ գեռ հիմա աշխատանքի ժամանակ է . ուստի որպիսի անդու ջանացողութեամբ պէտք է ինծի հողի փրկութեանս գործքին զբաղիլ , ամենէն աւելի ու գրեթէ ամենուն մէջը միտքս անոր տալով , անոր մէջ դիւրին ու ապահով կերպով մը յաջողելու միջոցները դանց չընելով՝ ու զանիկայ կորսնցընելու վտանգին մէջ դնելու գործքերէն ետ կենալով , միճակիս պարտաւորութիւններուն ու Ս. տուժոյ շնորհքներուն պահպանութեանը հաւատարիմ՝ ճիշդ եռացկուն ըլլալով . ու ասիկայ ինչուան որ կենացս օրերը լմնցուցած , դամ հասնիմ աս խօսքը ըսելու կէտին . « Զբարւոք պատերազմն պատերազմնցայ , զրնթացսն կատարեցի , զհաւատսրն պահեցի . այսուհետե կայ և մնայ ինձ արգարութեան պսակն զոր հատուցէ ինձ տէր յաւուր յայնմիկ արգարն դատաւոր » :



ՎԵՐՋԻՆ ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ

« Ես այստեղ եմ, և ժամանակ  
 դարձի իմոյ հասնող կայ » .

Բ. ՏԻՄ. Դ. Ե:

Ահա աս մէկ խօսքը կրկին նշանակու-  
 թիւններ ունենալով իր մէջը, կրկին ալ  
 իմաստներ տուն կու տան. որուն մէկը մի-  
 այն արդար ու կատարեալ մարդու մը բե-  
 րանը կը վայլէ, ինչպէս է Պօղոս առա-  
 քեալը՝ որ աս խօսքը գուրցեր է . ու մէյ-  
 մըն ալ ատեն մը մեղաւոր, բայց հիմա  
 նոր ապաշխարող եղած հոգիի մը բերան  
 է: Ես ինչպէս որ առջինէն մաս չունիմ,  
 անանկ ալ ինձի համար չէ անիկայ ըսելը .  
 որովհետեւ աս խօսքը ճշմարտապէս ըսե-  
 լու համար անանկ բաներ կը պահանջուին,  
 ինչ որ արդար ու կատարեալ ըլլալու հա-  
 մար կը պահանջուէր . վասն զի անանկ  
 հոգիի մը ամենէն առաջ պէտք է բոլորո-  
 վին մեղքէն ու մեղքի շուքէն ևս մարդը  
 ու ազատ պահել զինքը, ամէն տեսակ  
 բռնաւոր . ախտաւոր . յօժարութիւնները  
 բաղձանքները սրտէն դուրս վաճնտել, ար-  
 մատէն խլել հանել, ամէն ցեղ առաքի-  
 նութիւններով ու բարեգործութիւններով

ուղել զարդարել իր անձը . Աստուծոյ շը-  
նորհքները , սուրբ պատուիրանքները , իր  
վիճակին կոչմունքին պարտաւորութիւն-  
ները տեղն ՚ի տեղ ամենայն հաւատար-  
մութեամբ պահել կատարել . ամէն կերպ  
ներսի դրսի մահացուցմունքներու կրթու-  
թիւններով նուաճել զսպել ինքը զինքը .  
Աստուծոյ համար շատ բան քաշել , մեղ-  
քերուն համար շատ արցունք թափել , հո-  
գի փրկութեան վրայ շատ աշխատիլ . ա-  
սանկ ըլլալ ու ընել բոլոր կենացը մէջ  
ինչուան հոգի շունչը , որ է ըսել սուրբ  
արդար կատարեալ մարդ ըլլալ : Ահա ա-  
սանկ հոգին աս կացութեանը մէջ ալ մար-  
մինէն ծանրութիւն , աշխարհքէս զգուանք  
մը իմանալով , արքայութեան բաղձանքով  
լցուած վառուած , օր օրուան վրայ ժա-  
մէ ժամ կը սպասէ իր մահուանը , որ մէյ-  
մը աս մարմնոյն բանտէն խալըսած՝ որ Աս-  
տուծոյ ու իր մէջը խարոց կը դնէ , կեան-  
քին տարիներուն շղթան փրցընելով որ  
զինքը կապած աշխրբին չթողուր Աստու-  
ծոյ հետ միանալու , ան երանական որ-  
դիական ազատութիւնը ձեռք բերելով ,  
նոր թևեր առած թևաւորուած , ելլայ թըռ-  
չի երթայ հանդի արքայութեան մէջ Աս-  
տուծոյ զիրկը , դէմ յանդիման տեսնայ  
գտնայ վայելէ իր Աստուածը՝ սրտին սի-  
րուն փեսան , հաճութեան մէկ հատիկ նը-

պատակը՝ որուն համար անչափ լացեր էր, դորն որ տեսնալու անչափ բաղձացիր ու գտնալու համար անչափ բան քաշեր էր: Ահա այսպիսի երջանիկ հողի մը ասանկ կացութեան մը մէջ՝ ատենը եկած է ըսելուն. « Ես այսուհետեւ նուիրեալ եմ, և ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ »:

Բայց ահա իմին հոս տեղը ասիկայ ըսելս, տարբեր մտքով ու ուրիշ նշանակութեամբ մըն է, որ շատ դանադանութիւն ունի առջինէն, թող անիկայ զուրցէ Պօղոս առաքեալի պէս մարդ Աստուծոյ մը, չէ թէ ինծի պէս մարդ աշխարհի մը՝ որ դեռ ահա նոր ապաշխարող մը ըլլալու կըսկսիմ, դեռ ան սրբութեան արդարութեան ճամբան մտնալու պատրաստութեան վրայ եմ, ան քրիստոնէական կատարելութեանը բարձր լեռանը հաղիւ թէ ոտքը հասեր եկեր՝ քայլ մը չեմ ըրեր անդին. որ է ըսել՝ դեռ ապաշխարութեան հողիին կացութեան մէջն եմ, որ սրբութեան ու մեղքի, արգարի ու մեղաւորի մէջ տեղը վիճակ մըն է. իրացընէ մէկ շատ լեզի արցունքներու ու վիրաւորուած տրտում մտածութիւններու տեսարան: Աւտի հիմա ահա ասանկ ինծի պէս նոր ապաշխարողի մը բերանը զղջումի ձև ընելով աս զրցուածքը, ասանկ իմաստներ մը ալ կը խորհրդածեմ անոր վրան. վասն

զի ես ալ հիմա ճշմարիտ ասպաշխարհող ըլ-  
 լալու որոշեր եմ՝ ու աս օրուրնէ կուզեմ  
 ըլլալ . որովհետեւ ինչուան հիմա կեանքիս  
 մէջը ըրած անթիւ անհամար մեղքերս, որ  
 մոռցեր էի, բանի մը տեղ չէի դներ, ու  
 զեռ ընելու ետեէն էի, հիմա մէկմէկ աչ-  
 քիս առջին գալով շարուելով, ու տեսնա-  
 լով զանոնք ինչպէս մէյմէկ տղեղ դարհու-  
 բելի գարշելի զգուելի հրէշ մը, անոնց  
 ծանրութիւնը մենծութիւնը իմանալով,  
 որ ինչ եզանակ ու ինչ աստիճան վըշ-  
 տացուցեր անարգեր է Աստուծոյ վե-  
 հափառութիւնը սրբութիւնը արդարու-  
 թիւնը, ու որպիսի մենծ մենծ յաւիտենա-  
 կան կորստեան դռներ բանալով առջիս՝  
 դժոխքին բերանը քաշքշեր բերեր ձգեր է  
 զիս, ահա ասոնց ամէնը տեսնալով ու  
 միանգամայն աղէկէն համոզուելով մտքիս  
 մէջ որ ետքի ժամանակը իմինս չէ, որով-  
 հետեւ չեմ զիտեր կեանքիս օրերուն ինչ-  
 չափ ըլլալը, « Եւ զթիւ ամաց իմոց քա-  
 նիօն է զի զիտացից », անոր համար հի-  
 մա ատենն եկեր է ինծի ալ ըսելու . « Ես  
 այսուհետեւ նուիրեալ եմ, և ժամանակ դար-  
 ձի իմոց հասեալ կայ », հիմակուրնէ աս  
 վայրկեանէն մէկ նոր որոշմունքով հաստատ  
 առաջադրութեամբ մը, մեղքերուս վրայ  
 ցաւելու զղջալու, վտանգներէն դուրս ել-  
 լալու, առիթները կտրելու, գայթակղու-

Թիւնները մէջ տեղաց վերցընելու, հին մարդը մեղաց ցանկութեանց խարէութիւններովը մերկանալով իզմէ՛ խաչ հանելու, ու նոր մարդը որ ըստ Աստուծոյն է սրբութեամբ ու արդարութեամբ հաղնելու :

Ահա այսպիսի ապաշխարող հոգիի մը որոշմունքներով աշխրբէս ու մեղքերէն իմ ձեռքովս խլելով սիրտս՝ կու տամ կը նուիրեմ Աստուծոյ, արդարութեան սեղանը կը մատուցանեմ կը դնեմ, ինչպէս զոհ ըլլալու պատրաստուած ոչխար մը, զոյճումի հոգիի վիրաւորած խոցուած սըրտի արեան արցունքի մէջ թապալտըկելով, ու վճարմունքի հոգիի կրակներուն բոցերուն մէջ այրելով տոչորուելով, բոլորովին մեղքի համար հատնելու : Ինչու որ աստ և այժմ՝ առ Աստուած ապաշխարութեամբ դարձիս ժամանակը եկեր հասեր է, հիմա անոր սկիզբն է ինձի, ասօր փրկկութեանս օրն է, որ ատեն աստուածային անհուն ողորմութիւնը մեղաւոր տանս այցելութեան եկած է. շնորհքը արդէն սկսեր է սրտիս մէջ իր առջի շարժմունքները ընել, երկնաւոր արեկին արշալոյսը մտքիս մէջ ծագեր է մեղքին մութը փառատելու : Ներքին դրդմունքը խղճմտանքըս իր թմրութենէն կարթնցընէ, որ ալ ապաշխարութեան ձեռք դարնեմ, Աստու

ծոյ կոչմունքը կը յորդորէ կը համոզէ զիս  
 պահ մը առաջ ցաւով արցունքով խոստո-  
 վանութեամբ ու կատարեալ զղջմամբ մեղ-  
 քերէս լուանալու սրբուելու, որ ասոնց  
 ամէնը ուրիշ բան չեն, բայց եթէ ըսել է  
 որ ապաշխարութեան հոգին առեր եմ,  
 առ Աստուած դարձիս ատենը եկեր դտեր  
 է զիս. անոր համար ինչպէս ճշմարիտ ա-  
 պաշխարող մը՝ ես ալ հիմա կըսկսիմ ըսել,  
 « Ես այսուհետեւ նուիրեալ եմ, և ժամա-  
 նակ դարձի իմոյ հասեալ կայ » : Ես որ  
 ինչուան հիմա աշխարբիս ունայնութիւննե-  
 րուն մէջը ընկղմեր թաղուեր էի, տալով  
 ինքը զինքս ամէն կերպ ախտաւոր ապա-  
 կանեալ յօժարութիւններուս կիրքերուս  
 ձեռքը, սատանայական փորձութիւննե-  
 րուն խաղալիկ ըլլալով, ամէն իժիր կամ-  
 քիս ուղածին, խելապատակիս փչածին  
 ետեւէն երթալով, զգայութիւններուս բըռ-  
 նութեան տակը շղթաներով կապած գե-  
 րիի պէս ճնշելով ճմլելով, մէկ մեղքէն  
 միւս մեղք, մոլութենէ մոլութիւն, փոսէ  
 փոս զլտորելով երթալով ինչուան դժոխ-  
 քին անելանելի փոսը, բայց աս օրուան  
 օրս Աստուծոյ անհուն ողորմութեանը այ-  
 ցելութենով, տեսնալով ճանչնալով ինչ  
 խեղճ ողորմելի ու յաւիտենական կորըս-  
 տեան վիճակի մէջ ըլլալս, կըսկսիմ զգուիլ  
 դարչիլ իմին անցուցած վարքէս, ու մէկ

եարքի աստիճան ատելութիւն ու սոսկում  
 մը իմանալով մեղքէն՝ կուզեմ անոնց ա-  
 մէնը միանգամայն ժողովել նետել ինծմէ ,  
 որ անանկ ահագին դժոխքի ծանրութիւն  
 մը բեռցուցեր էին վրաս , որուն ներքե ա-  
 մէն օր լեղի մտածմունքներով ու յուսա-  
 հատութեան խորհուրդներով կը ճնշէի կը  
 հեծէի . ալ կուզեմ բոլորովին կտրիլ ա-  
 նոնցմէ , ամէն ներսէն զրսէն դաշինքը  
 բարեկամութիւնը ընտանութիւնը մեղքին  
 հետ արել ցրել , ու իմ ձեռքովս խլելով  
 սիրտս ու սրտիս հետ կամքս , զգայութիւն-  
 ներս , Աստուծոյ հանել տալ , ինչպէս մէկ  
 կատարեալ ամբողջական նուէր մը ընծայ  
 մը զոհ մը , առանց բան մը պահելու ինծի  
 անկէ , կամ աշխրբիս ու Աստուծոյ մէջ  
 կիսելու . վասն զի ինչպէս որ ամէնը Աս-  
 տուծոյ կը մատուցանեմ կը նուիրեմ , ա-  
 նանկ ալ անոնցմէ մէկը ետ չեմ առներ ,  
 հասլա ամէնը միանգամայն ու ամէն ա-  
 տեն կու տամ : Ես այսուհետե նուիրեալ  
 եմ ըսելուս վայրկենէն , ալ մէյմըն ալ չեմ  
 յիշեր զանոնք , չեմ ցաւիր , չեմ զղջար  
 ըրած ընծայիս , անոնց անունը մէյմըն ալ  
 բերանս չեմ առներ . ու ինչպէս որ աս  
 նուէրիս հետ զիս ալ մէկ տեղ նուիրե-  
 եմ՝ կըսեմ Աստուծոյ , անանկ ալ իմին  
 վրաս ունեցած տէրութենէս իշխանութե-  
 նէս բոլորովին կը հրաժարիմ , չկրնալով

ալ մարմինիս ու զգայութիւններուս ուզածին հետեիլ, անոնց կամքը կատարել. անանկ որ ես իզմէ ելած՝ ասանկ բոլորանուէր ընծայ ըլլալովս Աստուծոյ, նուիրական սուրբ բան մը ընելով անձս ու հոգիս, մէկ տեսակ սրբապղծութիւն ու սեղանակապտութիւն մը ըրած կը սեպուիմ՝ թէ որ ասկից ետքը անկէց բան մը զողնամ, պահեմ, սեփհականեմ ինծի: Ահա այսպիսի ամբողջական, ասանկ կատարեալ ու կամաւոր նուէր մը նէ, ով Աստուած իմ, որ հիմա քեզի ապաշխարութեամբ դարձիս օրը ընելու եկեր եմ ու կրնեմ, ու կուզեմ ինչուան ետքի շունչս աս մտքիս աս խօսքիս վրայ հաստատ կենալ, հաւատարիմ գտնուելով անոր ամէն պարտաւորութիւններուն մէջը:

Հանալա ընդունէ ուրեմն ով տէր, աս խոնարհ ու զղջացեալ սրտիս պատարագը նուէրը՝ որ ապաշխարութեան խորհուրդին սեղանին վրայ երկընքին դիմացը հաներ եմ այրելու բոլոր կեանքիս մէջ ինչուան մահուանս օրը, հոտոտէ զմայլէ սրտիդ հաճութեամբը՝ ի հաշտութիւն երեսացդ անոր խոնարհութեան հոտերուն, երկնաւոր շնորհքներուդ ցօղովը ինձնալով հոն, երկընքէն աստուածային օրհնութիւնդ առատութիւնդ հեղ թափէ անոր վրան, տար հանէ հասցուր դանիկայ ին-



չուան աստուածութեանդ աթոռը, որպէս  
 դի' օր մըն ալ աս ապաշխարող հոգիին վի-  
 ճակէն, արդարութեան ու սրբութեան վի-  
 ճակը անցնելով հաստատուելով մեռնե-  
 լուս ժամանակն ալ մէկ արդար առաքի-  
 նի կատարեալ ու սուրբ հոգիի պէս կա-  
 րող ըլլամ մի և նոյն խօսքը մէկ ուրիշ ի-  
 մաստով մըն ալ նորէն ըսել քեզի ան օրը :  
 « Ես այսուհետեւ նուիրեալ եմ, և ժամա-  
 նակ դարձի իմոյ հասեալ կայ » . որով ինչ-  
 պէս սուրբ հոգի մը մարմինէս թռածի պէս,  
 դամ դտնամ տեսնամ վայելեմ գրեղ յա-  
 վատնական արքայութեան մէջ :



ՉՐՅՈՒՍԾ ՄԸՆ ԱԼ

ՄԻՆԱԻՈՐ ՀՈԳԻՆ ԱՌ ՅԻՍՈՒՍ

ԽՈՐՀՐԴԱԳՈՐԾ ԵԱԼ,

« Ճշմարտացեալս զոչ եւ Սատուած ծածկեալ » .

ԵՍՍԵՒ ԽԵ . 15 . ըստ լատ . Թարգմ .

Ահա լայնատարած հաստատութիւն մը իր բիւրաւոր զարմանալիքներով ու լուսաւոր գունատերովը, բոլոր երկիւնք մը լայնածաւալ իր ահեղ միաձոյլ կամարով ու ընդհանուր շարժմամբը, աշխարհ մը բովանդակ լրիւ իւրով մենձ պղտիկ ստեղծուածովը ու անթիւ անհամար մանրուքով, ծով մը մեծ խորով ձորով իրեն ժողովով ջրոց ու բիւր բիւրուց ալիքներովը, ահազին լեռներ իրենց բոց նետող կրակ թափող հրաբուղխներով ու կարգ կարգ հանքերով, լայնատարած ցամաքներ իրենց ծլած ծաղկած դաշտերով հովիտներովը, ու ասոնց հետ ստեղծուածներուն ամէնը քուկին ճարտար մատանցդ մէյմէկ դեղեցիկ սքանչելի գործուածներ, իրենց ստեղծուած օրուրնէ բովանդակ լե-

դու ու բերան մը կտրած , ամէն օր ամէն  
 աւանն յայտնաբարբառ կը քարոզեն կը  
 պատմեն կը յայտնեն , դուրս կու տան կը  
 ծաւալեն ու գրեթէ ինչուան ծովուն խո-  
 բունկները , երկրիս անդունդները ու տիե-  
 դերքին յաւիտենական հիմունքները լսելի  
 կընեն կը հռչակեն կը հնչեցընեն՝ յայտնի  
 ճշմարիտ մենծ Աստուած մը ըլլալուդ , ա-  
 նանկ որ անոնց նայելով տեսնալով գրեզ  
 չտեսնալ չնշմարել չըլլար . ինչպէս լուսա-  
 ճառճանչ արև մը յարեկելից յարևմուտս՝ քե-  
 նէ լոյսի ազդիւրներ թափած ծաթած՝ ա-  
 մենուն պիտուն վերեր , միշտ ամենուն աչ-  
 քին գէմ՝ յանդիման ներկայ առաջիկայ  
 ես , ու միշտ պմայլման ու յափշտակու-  
 թեան սրատճառ մը , լիարերան օրհնու-  
 թեան ու երկրպագութեան նպատակ : Ա-  
 սանկով , Աստուած իմ , որ բանին աչքս  
 դարձցընեմ , որին վրայ նայուածքս դադ-  
 րեցընեմ , որ երթամ , որ տեղ կենամ ,  
 առանց գրեզ տեսնալու չեմ կրնար ըլ-  
 լալ : Ասանդի թէ որ մարդարէին հետ եր-  
 կինք ելլամ , քուկին թագաւորական փառ-  
 քիդ հանդիսարանը , հոն կը տեսնամ քե-  
 դի անթիւ դաս հրեշտակներու մը անլուե-  
 լի երեքսրբեան սրբաբանութիւններուն  
 մէջ , ուր քրովբէական թներու վրայ բարձ-  
 րացած , բոլոր արքայութիւն մը երեսիդ  
 լուսին դմայլմանը բռնելով , անդադար

երկրապագութեան կը հրաւիրես : Թէ որ  
 դժոխքը իջնամ, քուկին դատաւորական  
 վրէժխնդրութեանդ տեսարան, հոն ալ  
 կը տեսնամ դքեղ հուր բորբոքած բար-  
 կութեանդ կայծակներուն մէջ, որ դժոխք  
 մը իր յաւիտենականութենով ու անշէջ  
 բոցովը կապած կաշկանդած կը հարկա-  
 դրես խոստովանելու յայտնի ճշմարիտար-  
 դար Աստուած մը ըլլալու : Թէ որ ահա-  
 դին լերանց խոռոչները մտած պահուրտիմ  
 տեսքէդ, ահա անոնք ալ ոտքիդ ձայնէն  
 ու երեսիդ փայլմունքէն մամի պէս հալած  
 կը լուծանին ու հիմանց սասանելով կը սու-  
 դանին : Ահա ասանկ ամէն տեղ ու ամե-  
 նուն մէջ ներկայ առաջիկայ յայտնի Աս-  
 տուած մըն ես ճշմարիտ :

Բայց ահա այսչափ խի՛ն գրցուածնե-  
 րուս ու յայտնի ցուցմունքներուն հակա-  
 ոակ՝ ծածուկ Աստուած մը կը կանչեմ ես  
 քեզի այսօր, որ որչափ ճշմարիտ՝ նոյն-  
 չափ ծածուկ, ու որքան ծածուկ՝ նոյնքան  
 ճշմարիտ . « Ճշմարտապէս դու ես Աս-  
 տուած ծածկեալ » : Ի՛նչ բան է ասիկայ,  
 որն է արդեօք պատճառը, որ ասանկ ը-  
 սել մը կու տայ ինծի հիմա ու աս եղանակ  
 միտքեր մը խորհրդածել կու տայ . ո՛ր ար-  
 դեօք տեսած դիտած պիտոր ըլլամ դքեղ  
 այսօր, որ ուրիշ անդամին տեսած չըլ-  
 լայի . ո՛ր տեղ կը դանուխ, որ ասանկ

դիմակի մը տակ կը ցուցնենս դքեղ ու ան-  
 երևութաբար անդգալի եղանակաւ մը կե-  
 րենաս աչքիս , որով ինծի ալ նոր անսովոր  
 լեզուներ մը բերանս կը դնես , ծածուկ Աս-  
 տուած մը կանչել տալով դքեղ : Արդեօք  
 միթէ ինչպէս ատեն մը Մովսէսին երևա-  
 ծիդ պէս մօրենիին մէջէն՝ հիմա կերենան  
 ինծի ալ , որ կը վառէր ու չէր այրեր : Կամ  
 թէ ըսեմ ինտոր որ Յովհաննէս Մկրտա-  
 չին տեսնուածիդ պէս , կուսական մօր յար-  
 գանդը գոցուած , յորովայնէ յորովայն  
 երկրպագել տալով քեզ , բայց ահա ասոնց  
 մէջը արդէն անոնց աչքովը յայտնի տե-  
 տածի պէս մըն եմ ես ալ : Թէ որ ըսեմ ա-  
 տեն մը Բեթղեհէմի մսուրը խանձարրա-  
 սլատ մանուկ տեսնուածիդ . բայց ահա ա-  
 նոր վրան վերէն ծաթած արտաքոյ կարդի  
 նշանաւոր դիտաւորները՝ մենձ մենձ թա-  
 դաւորները հեռու տեղերէն իրենց գան-  
 ձերովը շարժելով ու ոտքիդ երկրպագու-  
 թեանը բերելով , կիմացընեն յայտնի ճըշ-  
 մարիտ Աստուած մը ըլլալդ : Արդեօք ՚ի  
 նմանութիւն ծառայական կերպի մեզա-  
 տրաց մէջ խառնած Յորդանանը երևնա-  
 լո՞ւց . բայց ահա նոյն ատենն ալ երկինքը  
 բացուած , հողին սուրբին թեատարած ի-  
 ջանելովը վրադ , յայտնի Աստուած ըլ-  
 լալդ կերենայ : Միթէ ան երեսունիբեր  
 տարի մահկանացու կեանքիդ միջոցին ,

աստուածային փառքդ լոյսդ պահած զըս-  
 պած , պահ մը մութ խանութի մը մէջ ,  
 պահ մը աղքատին տանիքի մը ներքե , ան-  
 ծանօթ ու ծածկաբար կեանքիդ խորհոյ-  
 դին ըսեմ . բայց ահա ան ատենն ալ հի-  
 ւանդները քեզմով բժշկութիւն տեսած ,  
 կուրերը քեզմէ լոյս առած , անդամալուծ-  
 ները խօսքովդ վազվրդած , ու մեռեալնե-  
 րը ձայնիդ ուժէն ելած կանդնած՝ մատով  
 կը ցուցնենն ու բերնով կը դաւանին որդի  
 Աստուծոյ ըլլալդ : Չըլլայ թէ Գողգոթային  
 գլուխը չարչարելի մարմնովդ մահու խայ-  
 տառակութեան մէջ տեսնուածիդ : Բայց  
 ահա զիմացի բարձր թափոր լեռը աս-  
 տուածային պայծառ փառքիդ քիչ մը ա-  
 ռաջ ահանատես , լուսաւոր ամպէն հօրդ  
 կանչելովը՝ դա է որդի իմ սիրելի , վկայ  
 է յայտնի Աստուած ըլլալուդ : Գուցէ ը-  
 սէի ետքի անդամ խաչին վրայ հողեփարք  
 իյնալուդ միջոցին . բայց ահա նոյն շիտ-  
 թութեան մէջն ալ , արեւ մթով պա-  
 տած , լուսինը արուն դարձած , քարերը  
 ձաթռտած , լեռները սասանած , տաճարին  
 վարագուրը մէջ տեղէն երկու սրատուած ,  
 ու մեռելներ գերեզմանէն դուրս թափած ,  
 նոյն իսկ խաչ հանողները ևս կը հարկա-  
 գրեն կուրծքերնին դարնելով կանչելու՝ որ  
 արդարեւ որդի Աստուծոյ ևս դուն . որով  
 աստնց ամենուն մէջ յայտնի Աստուածս

ըլլալուդ կը հաւատամ, կը դառանիս ու  
կերկրապանս :

Հասկա ո՞ր ատեն, ինչ բանին մէջ, ո՞ր  
տեսնալուս քեզի, ասանկ ծածուկ դադ-  
տուկ Աստուած ճանչցեր կը կանչեմ. ի-  
րացընէ, ով տէր իմ, ուրիշ տեղ չէ, բայց  
եթէ ահա հիմա հոս տեղ խորանին վրայ,  
սրբազործեալ նշխարքին ներքե, ամե-  
նասուրբ Հաղորդութեան խորհուրդին  
մէջ. մէկ խորին ներքին անտես աներևոյթ  
խորհուրդի մը խորհրդաւոր կեանքիդ մէ-  
ջը, ուր ամէն հրեշտակային երգերդ լու-  
ցուցած, լոյսերդ մարած, թագաւորական  
փառքերէդ կողոպտածի՝ արքայական ծի-  
րանիներէդ մերկացածի պէս, սրովբէա-  
կան աթոռը երկնային պալատը՝ երկրիս  
ցածուն խորաններուն ու աղքատին սըր-  
բատուիններուն փոխադրած, ինչպէս սո-  
ղոմոնեան տաճարին ներքին սրբութիւն  
սրբոց մը, լուսթեան մինակութեան ներ-  
սէ դրսէ վարազուրներով գոցուած փա-  
կուած ու քոզով սրբով բոլորովին ծած-  
կուած, խոնարհութեան հողիին ու զենման  
գոհի կացութեան ներքին կեանքի մը տը-  
ւեր ես գրեզ, նուրբ սուրբ աչքերէ, ես պա-  
հելով ծածկելով դքեզ, հաւտացողի աչ-  
քին միայն անդդայապէս տեսանելի. որ  
ոչ այնչափ բերանով զգալի, որչափ որ  
սրտիս պաշտելի ու երկրապանելի : Աւր աս-

տուածային ներկայութիւնդ նիւթական մարմինի դոյացական պատահմունքի մէջ կերեցընես, ամենակալութիւնդ ամէն տեղ սրբագործեալ նշխարքներուն ներքե, անհնութիւնդ աչքի տակ շիյնալու չափ մանրութիւնդ փշրանքներու մասունքներուն մէջ, աստուածութիւնդ հացին ու զինիին նըւատ տեսակին տակ, ամենակարողութիւնդ մարդկային կարողութեան ձեռքը, տկար պաշտօնեայի մը խորհրդական բառի մը ուժին վրայ, անչափ անգամ երկընքէն երկիր իջնալով, աստուածութեանդ աթոռէն խորանին վրայ, արքայութենէդ նշխարքին մէջ կիջնաս. որուն մէջ ամէն մէկ շարչարանքներուդ կացութենէն անցնելով, խորհրդաւոր խաչիդ դամած, արուն թափելով մեռնելով, միշտ անդդալի եղանակաւ մը մահկանացու կեանքիդ լրումը անմահ կեանքիդ սկսուածը կընես: Ահա ասանկ չլսուած չտեսնըւած մենծ մենծ հրաշքներու գումար մը ընելով, հոն միշտ կը ճանչցընես դքեդ Աստուած մը՝ որ որչափ ճշմարիտ, նոյնչափ ծածուկ. անանկ որ անոր հաւատացողը միայն կրնայ տեսնալ ճանչնալ դքեդ, զանիկայ սրտով դաւանողը միայն կրնայ գննել զմայլիլ քեզի, անկէ սրբութեամբ ճաշակողը միայն համարես կըլլայ քեզմէ ու զանի ահիւ և զոգութեամբ ներսը ըն-



դունողը միայն ուժէզ կըզգենու կը նորոզի  
կը սնանի ու սիրովզ վառուած արքայու-  
թիւնը սրտին մէջ կը գտնայ :

Աստի ահա աս նկատմունքով իրացը-  
նէ ուրիշ տեղ այնչափ չէ, որչափ որ ա-  
մենասուրբ հաղորդութեան խորհուրդին  
մէջ դիտելով տեսնալովս դքեղ, կը կան-  
չեմ. « Ճշմարտապէս դու ես Աստուած  
ճածկեալ » : Ասան դի դուն հոս լուսերով  
լիք ջահ մըն ես Գեղէոնին, բայց կաւէ ա-  
նօթի մէջ պահուած. երկնային մանա-  
նայ մըն ես ամենահամ, բայց հողէ սա-  
փորի մէջ թաղուցեալ. մշտաբուղիս աղ-  
բիւր մըն ես ջրոց կենդանութեան, բայց  
դրսէն բերանը կնքուած. եղեմական դը-  
րախտ մըն ես փափկութեան, բայց  
սրովբէից հրեղէն սուրբէն դոներդ բըռ-  
նուած. դանձ մըն ես աստուածային հա-  
րըստութեանց, բայց աւետարանական  
ազարակին մէջ ճածկեալ. հրաշալի բար-  
ճրակառոյց տաճար մըն ես Սողոմոնին,  
բայց առանց մուրճի կռանի ձայներու  
դիզուած շինուած. մէկ խօսք՝ Յակոբին  
խորհրդաւոր երկնէ յերկիր սանդուղն ես,  
մէկ ձայրով աստուածութեանդ դարած ու  
միւս ձայրը մարդկութեանդ, միշտ երկու-  
քը մէկ տեղ միացընելով բովանդակելով  
վրադ, ու իրարմէ հաղորդելովզ, ինչուան  
աշխարհիս վերջը շարունակած : Ասոնց ա-

մէնը ամենասուրբ հաղորդութեան խորհուրդին մէջ, քուկին ներքին ծածուկ կեանքիդ օրինակները, նմանութիւններն ու զաղափարներն են. իրացընէ խորին քննութեան զննութեան արժանի, զեղեցիկ խորհրդածութեանց ու յարգական երկրպագութեանց նիւթ:

Ահա ասանկ մը նկատելէս ետքը ինչւան հոս, հիմա նորէն կու գամ ըսելու. « Ըմարտապէս դու ես Աստուած ծածկեալ »: Ծածկեալ կանչելով զքեզ՝ ճշմարիտ խոնարհ ըլլալդ կիմացընեմ. որ թէ եայսօր իմին աչքիս նոր, բայց քեզի համար նոր բան մը չէ, մանաւանդ որ քեզի յատուկ սեփական եղած՝ շատոնցմէ վեր սիրելի հաճոյական առաքինութիւն մըն է, աշխրբիս վրայ մարդեղութեանդ խորհուրդին մէջ սկսած, ու ամենասուրբ հաղորդութեան խորհուրդին մէջ ինչուան աշխրբիս վերջը նոյնը զերազանցապէս ծածկաբար եղանակաւ մը շարունակած: Արուն առջի կեանքդ աս ետքը անցընելու կեանքիդ վարպետ ճիշդ նկարուած մը կընես. անանկ որ աշխրբիս վրայ ցուցըցած սքանչելի խոնարհութիւններդ՝ զքեզ տեսնողներուն աչքը կառնէ, ամենուն լեզուն բերանը մէկ զարմանքի գովեստի նիւթ մը եղաւ նէ աս խորհրդաւոր ծածուկ կեանքիդ անդունդին մէջ, ան ալ քողի գիմա-

կի տակ պահես : Ասան զի ահա դուն հոս  
տեղ ամէն դրսի վեհափառութեան մեն-  
ծութիւնդ մէկդի ըրած , լուսերդ մթնցու-  
ցած , երկինքը երկիրը ստեղծող , լի փա-  
ռօք Աստուած մը , կու գաս կիջնամ չէ թէ  
ինչպէս ատեն մը անարատ կոյսի մը սուրբ  
յարգանդը , հապա մէկ հասարակ պարզ  
հացի ու դինիի մը տեսակի տակ , ամե-  
նուն աչքին երանալով չէ թէ Բեթղեհէմը  
երեցած մանուկի պէս , հապա հացի դի-  
նիի մը նուաստ տեսակով , մէկ ետքի աս-  
տիճան չճանչցուելու քամահուելու կա-  
ցութեան մը դրած գրեզ : Հոս վերակա-  
ցու պաշտօնեայ եղողները քեզի՛ չէ թէ  
կոյս մօրդ ու Յովսէփին պէս սուրբ ու  
ընտրեալ անձինքներ կըլլան , հապա ա-  
նոնց առաքինութիւններէն շատ վար , չը-  
սեմ՝ բոլորովին վերջացեալ , աննման ,  
անարժան , տկար պաշտօնեայներ , որ քե-  
զի ամէն օր ուղածնին պէս կառնեն կը  
դնեն կը վերցընեն , ու դուն միշտ անոնց  
խօսքին ու ակնարկութեանը հնազանդ նը-  
պատակ : Հոս տեղ բնակութիւն ըրած  
բազմոցներդ չէ թէ միայն երբեմն երբեմն  
փառաւոր հարուստ եկեղեցիներուն ար-  
ծաթապատ ոսկեճաճանջ սրբարաններուն  
մէջը , զարդարուած խորաններուն մէկ  
շատ ջահերուն մոմերուն փայլմունքին մէջ  
կըլլայ , հապա շատ անգամ պզտիկ աղ-

քատին մատուռներուն սարգ փայտաչէն  
 սրբատուփներուն անդարդ բազմոցնե-  
 րուն վրայ, հաղիւ թէ հողէ կանթեղի մը  
 մարմրած լուսի նշան մը առջնդ ունենա-  
 լով. ու դուն ասանկներուն խտրութիւն  
 մը չընելով միշտ անտարբեր կը ցուցընես  
 դքեզ: Հոս այցելութիւն եկողները քեզի  
 չէ թէ սիրելի առաքեալներուդ պէս առա-  
 քինի ընտրեալ անձինքներ են, հապա շատ  
 անգամ սանկ հասարակ, պարզամիտ դե-  
 ղացի աղքատ մարդիկ, որոնք ժամերով  
 առնելով նստելով երկան բարակ ներսէ  
 ներս կենցաղավարութիւններ բարեկա-  
 մութիւններ կընես, ուր մնաց որ շատ ան-  
 գամ բոլոր զիշերները, օրերով շարաթ-  
 ներով առանձնութեան մինակութեանդ  
 մէջ լսիկ մնջիկ համբերութեամբ կըսպա-  
 սես. թէպէտ և դուն ան լուռ քարոզու-  
 թեանդ մէջն ալ միշտ ծածկարար ու ան-  
 դդալի կերպով մը, սիրալիր յորդորանքնե-  
 րովդ ու անուշ զգուանքներովդ ամենուն  
 սիրաբը քեզի առնելով քաշելով, քարա-  
 սիրտները կը կակղցընես, ստահակները  
 ճամբայ կը բերես, գաղջ թոյլ սկաղ հողի-  
 ները սիրովդ կը վառես, տկարներուն ուժ  
 արիութիւն կու տաս: Սասնկով հոնկէց  
 բոլոր եկեղեցիին լայնարձակ տէրութիւնը  
 կը տնտեսես կը կառավարես, ամէն ան-  
 գամ մէկ շատ առատ շնորհքներուդ սար-

դևույժը դանձերովը, դամէնքը լեցընելով  
 գոհ ընելով մխիթարելով, հոս հոն վազե-  
 լով, ասոր անոր օգնութեանը հասնելով,  
 ոմանց բժիշկ, դեղ դարման, ոմանց հո-  
 գերական սնունդ ու դովացումն, քանի-  
 ներուն ալ հանդերձեալ կենաց թոշակ ու  
 երկնից արքայութեան առաջնորդ ըլլալով:  
 Ասանկով հոն տեղը կրնամ ըսել, որ կու-  
 բերը լուսաւորելէն, կաղերը անդամա-  
 լուծները քալցընելէն, մեռելները յա-  
 րուցանելէն աւելի ծածկոյթի քողի տակ  
 դարմանալի հրաշքներ կրնես, մենձ մենձ  
 գործքեր կըլմնցընես, մէկու մը ձանձուն  
 չհանելով, անունդ բերել չտալով, ամէն-  
 քը ան ծածուկ կեանքիդ ներքին խոնար-  
 հութեան հողիին մէջ առած պահած:

Ահա ասանկ երբ մէկ կողմանէ սրբու-  
 թեան խորհուրդին աս խոնարհ կացու-  
 թեանը ծածուկ կեանքին նպատակ ըրած  
 դքեղ, մարդկութենովդ « Փառքս իմ ոչ-  
 ինչ են » կանչելովդ, Աստուծոյ փառացը  
 փոխարէն տուեր ես դքեղ նոյն ատեն աս-  
 տուածութեամբդ երանական ու փառաց  
 կեանքով մը կը յաղթանակես հոն, ինչ-  
 պէս ծածուկ, բայց ճշմարիտ Աստուած,  
 « Ճշմարտապէս դու ես Աստուած ծած-  
 կեալ », բայց տէր իմ՝ ահա ան ծածուկ  
 կեանքիդ սր սրբութեանդ խորհուրդին մէջ  
 մէկ զոհի կացութիւն մըն ալ կը նշմարեմ

ես . վասն զի թէպէտ և Գողգոթային վը-  
րայ խաչիդ զոհը քանի մը ժամ տևեց ,  
մէկ անգամ մեռնելովդ հոն , աշխրբիս  
փրկագործութիւնը կատարելապէս զլուս  
հասուցիր , բայց ահա աս սուրբ խորհուր-  
դին մէջ նոյն պատարագին նորէ նոր յի-  
շատակը կրկնելով նորոգելովդ , ինչուան  
աշխրբիս վերջը կը շարունակես . որով հի-  
մակու աս ծածուկ կեանքիդ ներքին մահա-  
ցուցումը առջի կեանքիդ մահուանը շա-  
րունակութիւն մը կընես . այնպէս մը որ  
թէ որ անոր մէջ աստուածութիւնդ թշնա-  
միներուդ աչքէն պահելը բաւական եղաւ  
նէ , որ Աստուած ըլլալդ զիտնային՝ չէին  
ալ խաչ հաներ , ասոր մէջ մարդկութիւնդ  
ևս նոյն իսկ սիրելիներէդ կը պահեն . ուս-  
տի ահա աս նկատմունքով կը տեսնամ  
քեզի հոս սեղանին վրայ աս տեսակ զո-  
հի կացութեան մը մէջ ինչպէս նոր Սա-  
հակ մը փայտակուտին վրայ լուռ մունճ  
կապած կաշկանդած անմեղ դառնուկի  
պէս , որ ողջակիզին ամէն պարտաւորու-  
թիւնը սիրով յանձդ առնելով , մեղքին  
համար Աստուծոյ արդարութեանը պատ-  
րաստական զենլի սպանդ մը կը սպասես  
մեզի համար , չէ թէ միայն արունիդ ին-  
չուան ետքի կաթիլը թափելով վազցընե-  
լով , հապա ինչպէս կատարեալ ողջակէզ  
մը բոլորանուէր երելով հատնելով հոն :

Վասն զի թէ որ խաչին վրայ մեռնելէդ ետքը գոնէ մեռած մարմինդ մնաց նէ, կամ թէ զլիսէդ ինչուան ոտքդ վէրքերով ծակով լիք արունաշաղախ մարմինիդ վրայ գոնէ մէկ սիրտդ անարատ ամբողջ մնացեր է նէ, հոս ան ալ չես թողուր, ամէնը մէկանց բոլորովին կու տաս կը հատցընես կը լմնցընես. որով հին օրէնքին չորս տեսակ պատարազը մէկտեղ մի և նոյն ատեն ամբողջապէս կը կատարես վրադ. քաւարարը վճարողականին հետ, ընդունողականը հաղորդականով, ինչպէս ծածուկ Աստուած մը մատուցանելով դքեզ ու մատչելովդ Աստուծոյ, ու ինչպէս ճշմարիտ Աստուած մը քեզմէ առնելով ու տալովդ մեզի:

Բայց ով Աստուած իմ, ճշմարիտ ու միանգամայն ծածուկ, ինտոր որ ճանչցայ տեսայ դքեզ հոս տեղ սրբութեան խորհուրդին մէջ, իրաւցընէ ահա աս ներքին ծածուկ կեանքիդ վրայ ինչ զարմանալի օրինակներ չես ցուցըներ, որպիսի գեղեցիկ դասեր չես իտար, ինչեր չես սորվցըներ ինձի, որ գուցէ ինչուան հիմա չէի դիտեր: Վասն զի ինչպէս որ հոն ան ներքին կեանքիդ լուծենով մինակութենով առանձնութենովը աշխրբէս ծածուկ ու անճանաչ մնալը կը սիրես՝ Աստուծոյ միայն տալով դքեզ, անանկ ալ կուզես իդ-

մէ նոյն առաքինութիւններուն գործու-  
նեայ կրթութիւններովը մարդիկներուն  
աչքին անճանաչ մնալ, աշխրբէս քաշուած  
առանձնակեաց կեանք մը անցընել, լու-  
թիւն մինակութիւնը սիրել, բոլորովին  
Սատուծոյ միայն դրաղելու, ծառայելու  
համար: Ինչպէս որ դուն հոն խոնարհու-  
թեան հողիով մը մեծութիւնդ փառքդ ծած-  
կելով պահելով՝ Սատուծոյ փառացը ու  
պատուոյն փոխարէն կու տաս, անանկ ալ  
կը պահանջես իդմէ ինքը զինքս խոնար-  
հեցընել, մարդկային նկատմունքը, աշ-  
խրբրին հարատութիւնը, առանձնական  
չահը, անձնական պարծանքը վար դնել  
քամահրել՝ Սատուծոյ պատիւը նախադա-  
սելու մտքով. ինտոր որ դուն անոր մէջ  
յարատե ներքին մահացուցմունքի հողիով  
ծածկարար զենման կացութեան մը զոհ  
կը մատուցանես զքեզ Սատուծոյ սիրոյն,  
ատանկ ալ կը բաղձաս որ ես ալ նոյն պատ-  
րաստութենով մը ներքին մահացուցման  
հողիին ձեռքով կամքս միտքս սիրտս միշտ  
զոհ ընեմ Սատուծոյ սիրոյն, վարդերով  
ծաղիկներով ծածկելով պահելով նոյնը  
մարդիկներուն աչքէն, Սատուծոյ մինակ  
աչքին հաճոյական ու ընդունելի ընե-  
լու դիտմունքով: Ահա ասանկ բաներ  
են ինձի հոն տեղ օրինակ տուած, սոր-  
վըցուցածներդ: ասոնցմէ կախորժիս,



զատնք կուղես կը պահանջես իզմէ ալ .  
որովհետեւ ասիկայ է ամենասուրբ հաղոր-  
դութեան խորհուրդին բուն ջերմեռան-  
դութեան հոգին , որուն ձեռքով կրնամ  
ըստ արժանւոյն սիրել պատուել քեզի հոն  
ինչպէս իմին ծածուկ ու ճշմարիտ Աս-  
տուածս :

Հնազանդ , ով տէր , տուր պարզելէ ինձի աս  
ճշմարիտ ջերմեռանդութեան հոգին , վա-  
ռէ սրտիս մէջը այսպիսի ներքին կեանքի  
մը առանձնութեան խոնարհութեան մա-  
հացուցման բոցը , որոնցմով դուն աս  
սուրբ սեղանին վրայ հանապաղօր վա-  
ռուած կը բորբոքիս . որպէս զի ինչպէս  
որ ես հիմա հոս աշխարհիս վրայ ատ քու  
խոնարհութեան ու զենման կեանքիդ ան-  
զգալի կերպով հաղորդ կըլլամ , անանկ  
ալ օր մը արքայութեան մէջ ան երանա-  
կան ու փառաց յայտնի կեանքիդ զգալի  
եղանակաւ մը մասնակից ըլլամ , միշտ ու  
յաւիտեան կանչելով երգելով քեզի՝ դուն  
ես ճշմարտապէս առաջ ծածուկ , բայց  
հիմա յայտնի Աստուածս :

77 . . . . .  
78 . . . . .  
79 . . . . .  
80 . . . . .  
81 . . . . .

## ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

### ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ա.	ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Դուռ ո՞վ էս մարդ . . . . .	9
Բ.	ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Թէ որպէս հասից 'ի մեռելացն յարու թիւն . . . . .	16
Գ.	ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Չի՛նչ օգուտ է մար- դոյ՝ էթէ զաշխարհս շահեացի և զանձն իւր կորուսցէ . . . . .	22
Դ.	ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Երկայնամիտ լեր առ իս, և հատուցից քեզ . . . . .	28
Ե.	ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Զամենայն զպարտան թողի քեզ . . . . .	34
Զ.	ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Վարդապետ, եկից և էս զկնի՛ք, յոր վայր և երթիցես . . . . .	40
Է.	ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Արդ ընդէ՞ր արտում էս անձն իմ, կամ ընդէ՞ր խռովէս զիս . . . . .	46
Ը.	ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Աստուած իմ, ըն- դէ՞ր թողեր զիս . . . . .	53
Թ.	ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Ընդ իս ո՞չ խօսիս . . . . .	60
Ժ.	ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Տէր և թէ՛ ընդ յար- կաւ իմով մտանիցես . . . . .	67

ԺԱ. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Վասն իմ մարմնով խաչեալ մեռանի Աստուած անմահ .	76
ԺԲ. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Ձընթացսն կա- տարեցի . . . . .	83
ՎԵՐՁԻՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ. Ես այսուհետև նուիրեալ եմ, և ժամանակ գարձի իմոյ հասեալ կայ . . . . .	93
ՁՐՑՈՒՄԸ ՄԸՆ ԱԼ ՄԻՆԱՒՈՐ ՀՈԳԻՒՆ ԱՌ- ՅԻՍՈՒՄ ԽՈՐՀՐԴԱԳՈՐԾԵՍԼ. Ճշմար- տապէս դու ես Աստուած ծածկեալ .	102

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ



57 . . . . .  
 58 . . . . .  
 59 . . . . .  
 60 . . . . .  
 61 . . . . .

62 . . . . .  
 63 . . . . .  
 64 . . . . .  
 65 . . . . .  
 66 . . . . .  
 67 . . . . .  
 68 . . . . .  
 69 . . . . .  
 70 . . . . .  
 71 . . . . .



